

Գեղամ Մ. Բաղայան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Մաս երրորդ: Էրզրումի նահանգի կենտրոնական ու արևմտյան գավառները և Էրզրում (Կարին) ու Երզնկա քաղաքները

Բանալի բառեր – Էրզրումի նահանգ, Էրզրում քաղաք, Երզնկա քաղաք, Էրզրումի գավառ, Դերջանի գավառ, Բայբուրթի (Բաբերդ) գավառ, Կամախի գավառ, Իսպիրի (Սպեր) գավառ, Կիսկիմի (Բերդագրակ) գավառ, Խոտորջուր:

Շարունակելով նախադեռնյան շրջանի Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագրի բացահայտմանը նվիրված մեր ուսումնասիրության հրապարակումը՝ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Էրզրումի կամ Կարնո նահանգի (թրք. Erzurum vilâyeti) հայաբնակ բնակավայրերը:

Վանի նահանգին նվիրված նախորդ հրապարակումների նման այս ուսումնասիրությունը նույնպես բաղկացած է 2 մասից: Ներկա հոդվածն ընդգրկում է Էրզրումի նահանգի համանուն սանջակի կենտրոնական և հյուսիսային գավառները (**Բայբուրթ** կամ **Բաբերդ**, **Դերջան**, **Էրզրում**, **Իսպիր** կամ **Սպեր**, **Կիսկիմ** կամ **Բերդագրակ**), ինչպես նաև նրա արևմտյան հատվածը կազմող՝ **Երզնկայի սանջակի** բոլոր 5 գավառները¹: Բնակավայրերի ցուցակները նույնպես կազմվել են նախորդ հոդվածներում կիրառված սկզբունքներով՝ նպատակ ունենալով ընթերցողին հասցնել հնարավորինս մանրամասն տեղեկատվություն նահանգի քաղաքների ու գյուղերի, նրանց սրբավայրերի (վանք, եկեղեցի, ուխտատեղի), ձեռագրական հարստության և պատմական հիշարժան իրադարձությունների վերաբերյալ:

Էրզրումի նահանգի պատմական ժողովրդագրության առանձնահատկությամբ պայմանավորված՝ ներկայացվող ցուցակներում ավելի մեծ տեղ է հատկացվել նախքան Մեծ եղեռնը հայաթափված բնակավայրերին: Ճիշտ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.12.2015:

1 Հոդվածում, «գավառ» հասկացությունն օգտագործված է որպես թրք. kaza-ի համարժեք:

Է. (ԺԳ) փաթիլ, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015
ՎԿԻ համահայկական հանդես

է, ինչպես իր տարածքով (շուրջ 50000 կմ²), այնպես էլ բնակչությանը (700000–750000), **Էրզրումի նահանգը** զգալիորեն գերազանցում էր **Վանի նահանգին**, սակայն հայության տեսակարար կշռով այն նկատելիորեն զիջում էր Վան–Վասպուրականին: Թեև Առաջին աշխարհամարտի նախօրյակին տեղի հայ բնակչության թիվը բավական պատկառելի էր՝ շուրջ 250000–260000, բայց օսմանյան տիրապետության շրջանում այստեղից սկիզբ էր առել հայության զանգվածային արտագաղթը: Առավել աղետալին, անշուշտ, 1829–1830 թթ. արևմտահայերի այսպես կոչված՝ մեծ գաղթն էր, երբ միայն **Էրզրումի նահանգից՝ Ախալցխա, Զավախք, Սևանի ավազան**, մասամբ նաև՝ **Արևելյան Շիրակ** տեղափոխվեց ավելի քան 50000 մարդ: Ընդ որում, նահանգի տարածքից հայերի հեռացումը չի ընդհատվել ողջ 19-րդ դարի ընթացքում:

Էրզրումի նահանգում խոշոր ծավալներ էր ընդունել նաև բռնի կրոնափոխությունը: Չդիմանալով օսմանյան վայրագություններին՝ 17-րդ դարի սկզբից սկսած, **Բայրուրթի (Բաբերդի), Երզնկայի, Իսպիրի (Սպեր), Կամախի, Կիսկիմ–Բերդագրակի, Քղիի (Խորձյան), Ղուզիջանի (Բոլմոր)** գավառների հայ բնակչության զգալի հատվածներ, իսկաև ընդունելով, ժամանակի ընթացքում կորցրին ազգային ինքնությունն ու լեզուն՝ դիտարկվելով որպես «թուրք» կամ «քուրդ», իսկ որոշ շրջաններում նաև՝ «լազ»: Դրանց մեջ գերիշխում էին դեռևս բյուզանդական տիրապետության շրջանում քաղկեդոնականությանը հարած և ազգային եկեղեցուց արհեստականորեն տարանջատված խմբերը: Սակայն կրոնափոխների մեջ 20-րդ դ. սկզբին անգամ հանդիպում էին բավական մեծաքանակ խմբեր, որոնք հայախոս էին և պահպանել էին բազմաթիվ հայկական սովորույթներ (այսպես կոչված՝ «կես–կեսները»):

Քանի որ **Էրզրումի նահանգն** ու մանավանդ ամբողջ ավանդաբար թուրքական տիրապետության հյուսիսարևելյան հենակետի դերն էին խաղում, այստեղ 19-րդ դարի 30-ական թվականներից սկսած՝ ռուսական առաջխաղացումը կասեցնելու նպատակով հայերի կողմից լքված քաղաքներում ու գյուղերում բնակեցվում էին մահմեդական վերաբնակիչներ (այսպես կոչված՝ «մուհաջիրներ»): Այս իրողությունը նույնպես իր բացասական կնիքն էր թողնում **Էրզրումի նահանգի** ժողովրդագրական նկարագրի վրա:

Ներկա ուսումնասիրության համար հիմք ծառայած սկզբնաղբյուրներից առաջնահերթ են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1913–1914 թթ. անցկացված վիճակագրության նյութերը, որոնք **Էրզրումի նահանգի** պարագայում կարելի է զգալիորեն հաջողված համարել²: Ընդ որում, նշված հաշվառման առանձին տեղեկագրերը տպվել են դեռ ժամանակակիցների կողմից³: Բացառիկ կարևոր, հաճախ եզակի են Հայաստանի

2 Տե՛ս **Թեղդիկ**, Գողգոթա հայ հոգևորականութան և իր հօտին աղետալի 1915 տարիին, Թեհրան, 2014: **Ramond H.Kévorkian**, Paul B.Paboudjian, Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille du Genocide, Paris, 1992 (այս վիճակագրության բնագրերը ներկայումս պահվում են Փարիզի Նուբարյան Ազգային գրադարանում): Ներկայացվող ցուցակները կազմելու համար օգտագործել ենք նաև պատմաբան, վիճակագիր և հրապարակախոս **Ա.Դոյի** «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» (Եր., 1912) ուշագրավ աշխատությունը:

3 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, N 199 (Խնուսի վիճակագրությունը): **Ջոնի Ա.**, Հողային հարցը Էրզրումի վիլայեթին մեջ (տեղեկություններ Դերջանի գիւղերի մասին), «Արև», Բագու, 1914, N 47:

ազգային արխիվի (ՀԱԱ) տպագիր և անտիպ վավերաթղթերը⁴:

Հետաքրքիր և շահեկան տվյալներ են հանդիպում նաև ժամանակի հայ մամուլում⁵: 1965 թ. Մեծ Եղեռնի 50-ամյակի տարելիցին Ամենայն Հայոց կաթողիկոսության «**Էջմիածին**» պաշտոնական պարբերականում թուրքագետ **Ա. Սաֆրաստյանի** թարգմանությամբ լույս տեսան Արևմտյան Հայաստանի նահանգների (վիլայեթներ) այլևայլ գավառների հայկական եկեղեցիների թաքրիր-ցուցակները, որոնք մինչև 1-ին աշխարհամարտը թեմերից ուղարկվել էին օսմանյան ՆԳՆ⁶: Բացառիկ կարևորություն ունեն նաև նշանավոր բանահավաք **Գարեգին Սրվանձտյանցի** և Մխիթարյան միաբան **Համազասպ Ոսկյանի** նյութերը⁷: Ուշագրավ են նաև **Ալեքսանդր Երիցյանի** կողմից հրատարակված վիճակագրական տեղեկությունները 1878 թ. ռուսական ռազմակալման ամիսներին ստեղծված Էրզրումի ժամանակավոր մարզի մասին⁸:

Որպես սահմանամերձ երկրամաս՝ **Էրզրումի նահանգը** կարևոր տեղ է ունեցել ռուսական ռազմական իշխանությունների համար, որոնք հատկապես 1877-1878 թթ. պատերազմին հաջորդած տարիներին ամեն կերպ ձգտել են հնարավորինս մանրամասն տեղեկություններ հայթայթել վերջինիս վարչամիավորների, բնակավայրերի քանակի, բնակչության թվի և ազգային կազմի վերաբերյալ: Այս տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում գեներալ **Ա. Դեննետի**⁹, Վանում ռուսական փոխ-հյուպատոս **Ա. Կոլյուբակինի**¹⁰ և գնդապետ **Մ. Պրժևալսկու**¹¹ նյութերը, որոնք հրատարակվել են Կովկասյան ռազմական օկրուգի Գլխավոր շտաբի կողմից:

Հետեղեռնյան շրջանում **Էրզրումի նահանգի** առանձին գավառների վերաբերյալ հրատարակվեցին մի շարք գործեր, որոնցից ներկա հոդվա-

Հ. Յակոբ ծ. վ. Քուեան, Բարձր Հայք, հատոր Ա (Կարին քաղաքը), Վիեննա, 1925: Հտ. Բ (Կարնոյ գիւղերը), 1926: **Бекгульянц Р.**, По Турецкой Армении Впечатления от поездки в 1914 году, Ростов на Дону, 1914.

4 Տես «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապարծների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հատոր III, Եր., 2012: ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գ. N 393: Ֆ.57, ց. 5, գ. N 123, 146, 159, 162, 164, 165: Ֆ.227, ց.1, գ. N 474 (վիճակագրական այլևայլ տվյալներ Բայբուրթի, Դերջանի, Երզնկայի, Կամախի, Կիսկիմ-Բերդագրակի մասին):

5 Տես «Արարատ», Սբ Էջմիածին, N Բ/Գ, Գ/Ե: «Հորիզոն», Թ., 1915, N 61 (Հավելված): «Վան-Տոսպ», Թ., 1916, N 15: 1917, N 6: «Համբաւաբեր», Թ., 1916, N 27, 29, 32: «Բազմավէպ», Վենետիկ-Սբ Ղազար, 1934, 7/8, 1935, 4/5 նւ:

6 Տես «Էջմիածին», Սբ Էջմիածին, 1965, N Ա, Բ-Գ-Դ:

7 Տես **Սրվանձտյան Գ.**, Երկեր, հատ. 2, Եր., 1982: «Բարձր Հայքի վանքերը», գրեց դկտր **Համազասպ Ոսկեան** Մխիթարեան ուխտէն, Վնն., 1951: Ի դեպ, Գ Սրվանձտյանցի հավաքած վիճակագրական տեղեկագրերը բացառիկ տվյալներ են պարունակում նաև հայկական դպրոցների վերաբերյալ: Ավելացնենք նաև, որ հայկական բնակավայրերի և սրբավայրերի մասին պահպանվել են սակավաթիվ, սակայն եզակի և խիստ արժեքավոր տեղեկություններ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում կամ հիշատակագրական նյութերում: Դրանք առանձնապես կարևոր են ժամանակի ընթացքում հայաթափված կամ բռնի կրոնափոխ եղած բնակավայրերի ճշտման համար: Չենք կարող չհիշել նաև 1806 թ. Սբ Ղազարում (Վենետիկ) հրատարակված **Ղ. Իսձիճյանի** «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (մասն I, հատ. Ա) հիանալի աշխատությունը, ուր պատմա-աշխարհագրական բնույթի մեծաքանակ նյութ է հավաքված ընդհանրապես ողջ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ:

8 Տես **Ерицов А. Д.**, Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России. Составлен в мае месяца 1878.- Приложение к 1-му выпуску VIII тома "Известий Кавказского отдела Императорского Русского географического общества", Тифлис, 1883.

9 Տես "Сборник маршрутов в районе Ольты-Саганлуг-Эрзерум", выпуск III, Т., 1891.

10 Տես **Колобакин А. М.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. 1, часть I, Т., 1888. Он же, т. 2, ч. II, Т., 1890.

11 Տես "Вилает Эрзерум", составлен Генерального Штаба полковником **М. Пржевальским**, ч. 1, Т., 1904.

ծաշարում օգտագործված են **Մ. Արսլանյանի**¹², **Հ. Դարբասյանի**¹³, **Վ Կոճոլոյան-Հովհաննեսյանի**¹⁴, **Հ. Հուլունյանի** և **Մ. Հաճյանի**¹⁵, **Ե. Մելիքյանի**¹⁶, **Գ Սյուրմենյանի**¹⁷, **Գ Ստեփանյանի**¹⁸ և այլոց աշխատությունների նյութերը: Քղիի գավառի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան տեղի Հայրենակցական միության կողմից հրատարակված տարեգրքում¹⁹:

Անկախության վերականգնումից անմիջապես հետո Հայաստանում հրատարակվեց **Ա. Մելքոնյանի** մեծարժեք ուսումնասիրությունը, որը առ այսօր ասպարեզում առկա միակ աշխատությունն է, ուր գիտական պատշաճ մակարդակով և ամենայն բարեխղճությամբ վեր են հանված էրզրումի նահանգի 18-րդ դարի վերջից մինչև 1830 թ. մեծ գաղթն ընդգրկող պատմությունն ու ժողովրդագրական իրավիճակը²⁰:

Ա/ Էրզրում (Կարին) քաղաք

Էրզրումի նահանգի կենտրոնը **Էրզրում** կամ **Կարին** քաղաքն էր: Գտնվում էր **Էրզրումի (Կարնո)** դաշտի արևելյան հատվածում՝ **Արևմտյան Եփրատի** վերին ավազանում (այս մասում գետը կոչվում է **Սևջուր**, թրք. Karasu), **Ծաղկավետ** կամ **Խաչափայտի** (թրք. Dumludağ) լեռների հարավային ստորոտին: Հարավից և արևմուտքից քաղաքը շրջապատված էր **Այծպակունքի** լեռնաշղթայի (թրք. Palandöken) **Գոհանամ** գագաթով, իսկ արևմուտքից՝ **Ծիրանյաց** լեռներով (թրք. Deveboyunu կամ Kargapazar Dağları): Որպես քաղաքային բնակավայր ձևավորվել է V դ. 1-ին տասնամյակներին, երբ **Բյուզանդիայի Թեոդոսիոս II** կայսրը (408-450) ընդարձակելով բնակավայրը շրջապատող պարսպաշարը և ամրացնելով միջնաբերդը, որը պահպանվել է առ այսօր, այն վերանվանեց **Թեոդոսուպոլիս** (հայկական սկզբնաղբյուրներում՝ «**Կարնոյ քաղաք**»): **Էրզրում-Կարինն** Արևմտյան Հայաստանի առավել խոշոր բնակավայրերից էր: Այլևայլ տվյալներով այն 1914 թ. ուներ ավելի քան 55000 բնակիչ: Հայերի թիվը հասնում էր 14000-15000-ի (որոշ աղբյուրներ նշում են 20000 թիվը): **Կարնո թեմի** առաջնորդանիստն էր **Սբ Աստվածածին Մայր Եկեղեցին**: Վերջինիս կից գտնվում էր **Միաբան Սբ Աստվածածին Եկեղեցին** (հայտնի ուխտատեղի էր, նախկինում՝ վանք): **Սբ Աստվածածին** էր կոչվում նաև հայ-կաթողիկե համայնքի եկեղեցին: **Էրզրումի** հայ բողոքականներն ունեին ժողովարան՝ կառուցված հայ եկեղեցաշինության

12 Տե՛ս **Արսլանեան Մաղափա**, Բաբերդ և շրջակայքը, Փարիզ, 1954 (1955):

13 Տե՛ս **Hrach A. Tarbassian**, Erzurum (Garin): Its Armenian History and Traditions, translated from the Armenian by **Nigol Shahgaldian**, USA, 1975.

14 Տե՛ս **Կոճոլոյան Յովհաննէսեան Վարդիթեր**, Ձիթող դաշտի Կարնոյ, Պէյրոյթ, 1972:

15 **Հ. Յարուբին վ. Հուլունեան** և **Հ.Մատթէոս վ. Հաճեան**, Յուշամատեան Խոտորջուրի, Վնն., 1964:

16 **Նդիշէ Յ. Մելիքեան**, Վիճակագիր Խնուս (Հարք) գաւառի և թոնդրակեցոց աղանդին և բողոքականութեան կայրը ի Խնուս, Ն. Եորք, 1943:

17 **Սիրովնեան Գալուստ**, Երզնկա, Գահիրէ, 1947:

18 **Ստեփանյան Գառնիկ**, Երզնկա, Եր., 2005:

19 «Տարեգիրք», Ա, Տիթրոյիտ, 1937, հրատարակություն Քղիի Հայրենակցական միության: Հարկ է նշել, որ Քղիի մասին XX դարակազբին ուսուցիչ **Լևոն Սրասյանի** հեղինակությամբ մի ուշագրավ հոդվածաշար է տպվել Կ.Պոլսի «Արևելք» պարբերականում: Այն «Քղի (տեղագրական և ազգագրական)» վերտառությամբ առանձին գրքով վերահրատարակվել է Անթիլիասում 1960 թ., որից և օգտվել ենք գավառի ցուցակները կազմելիս:

20 **Մելքոնյան Աշոտ**, Էրզրում: Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 1994:

կանոններով: Եկեղեցի են ունեցել նաև քաղաքի հույները (**Սբ Գևորգ**), որոնց թիվը 1914 թ. հասնում էր 600-ի: Հարկ է նշել, որ օսմանյան ծանր լուծն առավել ցայտուն կերպով էր արտահայտված **Արևմտյան Հայաստանի** այս երևելի կենտրոնում: **Էրզրումի** բազմաթիվ մզկիթների մեծագույն մասը երբեմնի հայկական արքավայրեր են եղել՝ տարբեր ժամանակներում խլված թուրքերի կողմից: Նմանատիպ մահմեդական աղոթատեղիներից առավել նշանավորներն էին **Ուլու ջամին** (թրք. «մեծ մզկիթ», ուներ 7 դուռ՝ թերևս նախկին խորանների թվով), **Բերդի Սբ Աստվածածինը** և **Սբ Սարգիսը** (2-ն էլ միջնաբերդի տարածքում), **Սբ Ստեփաննոսը**, IX դ. նահատակված **Սբ Սահակ** և **Սբ Հովսեփ** եղբայրների ուխտատեղի շիրմի մոտ գտնվող եկեղեցին, **Իջմեղանի Սբ Թորոս** մատուռը (դարձյալ ուխտատեղի էր հայերի համար) ևլն: Էրզրումում մեծ համբավ էին վայելում **Սբ Մինաս**, **Նահատակաց տապան**, **Սբ Պարգևատու**, **Սբ Վարվառե կույս** ուխտավայրերը: Եվս մեկը՝ **Սբ Նշանը**, գտնվում էր քաղաքից հս-արևելք բարձրացող համանուն լեռնագագաթի վրա: **Էրզրումը** հռչակված էր բազմաթիվ սառնորակ աղբյուրներով, որոնց մի մասը ևս «սուրբ» էր համարվում (**Լուսաղբյուր**, **Կարձաղբյուր**, **Քառասնակն**, թրք. Kırkçeşme):

Էրզրում-Կարինը եղել է հայ գրչության և, ընդհանրապես, հայ մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը: Միայն քաղաքում տարբեր ժամանակներում ստեղծված ձեռագրերից մեզ են հասել շուրջ 200-ը: Քաղաքում և շրջակա գյուղերում պահվել են մեծ թվով ձեռագրեր: Բավական է նշել, որ 1829-1830 թթ. արևմտահայերի մեծ գաղթի ընթացքում **Կարնո** հոգևոր առաջնորդ **Կարապետ** արքեպիսկոպոս **Բագրատունու** նախածեռնությամբ **Ալալցխա** տեղափոխված ձեռագրերի թիվը կազմում էր 106 միավոր (դրանցից 93-ը հետագայում տեղափոխվել են **Սուրբ Էջմիածին**): Բացի այդ, 1815-1912 թթ. ընթացքում **Մխիթարյան** միաբանների կողմից **Վենետիկ** կամ **Վիեննա** են փոխադրվել ևս 44 ձեռագրեր: Սրանով հանդերձ, քաղաքի **Արծնյան** և **Սանասարյան** վարժարանների գրադարաններում 1914 թ. պահվում էին շուրջ 160 գրչագիր մատյաններ: Երեք տասնյակից ավելի ձեռագիր կար նաև Էրզրումի գավառի **Հնձուց Սբ Աստվածածին (Կարմիր վանք)**, **Մուտուռու Սբ Լուսավորիչ** մենաստաններում, ինչպես նաև երկու տասնյակի չափ գյուղերում: Միաժամանակ **Էրզրումը** Հայոց կրթության և լուսավորության խոշոր կենտրոններից էր, որի նոր վերելքը կապվում է 19-րդ դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժման վերելքի հետ: Հայ իրականության մեջ առանձնակի հռչակ էր վայելում բարերար **Մկրտիչ Սանասարյանի** միջոցներով 1881 թ. հիմնադրված **Սանասարյան** վարժարանը, որի սաները, ըստ էության, ստանում էին միջնակարգ կրթություն: Հայտնի էր նաև **Արծնյան** վարժարանը, որը հիմնադրվել էր դեռ 1811 թ. **Կարապետ** արքեպիսկոպոս **Բագրատունու** ջանքերով: Վերոհիշյալ վարժարաններից բացի Կարինում գործում էր նաև 8 դպրոց, որոնցից **Մարյանը (Մարյան)** և **Տեր-Ազարյանն** ունեին հնգամյա, իսկ **Հոփսիմյանը** (աղջիկների)՝ յոթնամյա ուսուցում: 1913 թ. քաղաքի վարժարանների և դպրոցների հայ աշակերտության թիվը հասնում էր 2600-ի (ներառյալ հայկաթողիկե և բողոքական համայնքները, ինչպես նաև ֆրանցիսկյան-վեդարավորների դպրոցում սովորողները): Քաղաքում, որպես կանոն, ու-

սումնական հաստատություններին կից գործել է նաև մի քանի մանկապարտեզ (**Աղաբալյան, Արծնյան, Գավաֆյան, Մարյան**, բողոքականների): Ի դեպ, նախակրթարաններ կային նաև **Կարնո դաշտի** ավելի քան չորս տասնյակ հայաբնակ գյուղերում: **Էրզրումում** Մեծ Եղեռնի նախօրյակին եղել են մարմնակրթական և ֆուտբոլային ակումբներ, սկաուտական կազմակերպություն, երաժշտական և թատերական խմբեր: **Սանասարյան** և **Արծնյան** վարժարանները հայտնի էին իրենց հարուստ գրադարան-ընթերցարաններով, ուր տպագիր գրքերի և պարբերականների թիվը Մեծ Եղեռնի նախօրյակին գերազանցում էր 7600-ը: 1909 թվականից քաղաքում հիմնվել է հայկական տպագրություն: Մինչև 1914 թ. հրատարակվել են մի քանի պարբերականներ, որոնց շարքում առանձնանում էր «**Հառաջը**» (1909–1914):

Էրզրում-Կարինը մեծ տեղ է գրավում հայ ազատագրական շարժման մեջ: 1881–1882 թթ. այստեղ իր գործունեությունը ծավալեց «**Պաշտպան հայրենյաց**» կազմակերպությունը՝ **Խաչատուր Կերեքյանի** ղեկավարությամբ: 1890-ականները նշանավորվեցին հայ բնակչության նոր ելույթներով ընդդեմ թուրքական բռնապետության: Ցավոք, համիդյան կոտորածները ծանր հարված հասցրին **Կարնո** հայությանը, իսկ Մեծ Եղեռնը վերջնականապես ամայացրեց այս հնագույն հայկական կենտրոնը: Ինչպես քաղաքի, այնպես էլ **Էրզրումի գավառի** բազմահազարանոց հայ բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց բռնազաղթի ճանապարհին: 1917 թ. **Էրզրում** քաղաքում վերապրած հայերի թիվը հազիվ էր գերազանցում 130-ը (գերազանցապես կանայք և երեխաներ):

1) Էրզրումի գավառ (Օվա)

Էրզրումի նահանգապետի անմիջական ենթակայության ներքո գտնվող համանուն գավառը տարածվում էր **Արևմտյան Եփրատի** ակումբներում և մասամբ՝ վերին ավազանում (այդ հատվածում գետը կոչվում է **Սև ջուր**, թրք. Karasu): Սահմանակից էր արևելքից, **Ծիրանյաց լեռներով՝ Բասենին**, հարավ– արևելքից և հարավից, **Այծապտուկների լեռներով՝ Խնուսին** և **Գերջանին**, հյուսիսից, **Քոփի** կամ **Կապույտ լեռներով՝ Բայբուրթին (Բաբերդ)** և **Իսպիրին (Սպեր)**, հյուսիս–արևելքից, **Խաչափայտի** կամ **Ծաղկավեռ լեռներով՝ Թորթումին**: **Էրզրումի գավառն** Արևմտյան Հայաստանի առավել բազմամարդ և հայաշատ վարչամիավորներից էր: Մինչև 19-րդ դարի 20-ական թթ. վերջը հայերը կազմում էին գյուղական բնակչության գերակշիռ մեծամասնությունը (41000 մարդ՝ 130 գյուղերում և ավաններում): Սակայն 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմին հաջորդած արևմտահայերի մեծ գաղթը նկատելիորեն հայաթափեց **Էրզրումի** շատ բնակավայրեր: Գավառից զգալի արտագաղթ եղավ նաև 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի և 1895–1896 թթ. սուլթան Աբդուլ–Համիդ II-ի վարչակարգի կողմից իրականացված հայերի զանգվածային կոտորածների ժամանակ: Ի հետևանս այս ամենի, 20-րդ դարի սկզբին **Էրզրումի գավառի** հայ բնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր **Էրզրումի դաշտի** գյուղերում: Առանձին հայաբնակ կղզյակներ էին պահպանվել նաև **Աշկալայի շրջա-**

նում, իսկ գավառի հյուսիսարևմտյան մասը կազմող **Օվաջիկի գյուղախումբը** (պատմ.՝ **Շաղագոմ**), որը գրավում էր **Յփրատի** աջակողմյան **Սարչամա** վտակի՝ **Քարվորի** և **Քոփի** լեռներով սահմանափակված վերին և միջին ավազանը, ամբողջությամբ հայաթափված էր: Սրանով հանդերձ, Մեծ Եղեռնի նախօրյակին **Էրզրումի գավառի** գյուղաբնակ հայ բնակչությունը կենտրոնացած էր առավել բազմամարդ գյուղերում՝ կազմելով շուրջ 40 %-ը (27000-30000 մարդ): Քաղաքի հետ միասին, **Էրզրումի գավառի** հայ բնակչության թիվը հասնում էր 43000-45000-ի: Այս առումով այն **Էրզրումի նահանգի** ամենահայաշատ գավառն էր:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աբլրնդի (Էբելիհնդի)	Սբ Աստվածածին (Սբ Հակոբ)	1	Դպրոցը՝ Ռուբինյան : Գյուղում կար Սբ Սարգիս անունով մատուռ-ուխտատեղի:
2	Աշկալա (Աշխալա)	Եկեղեցի		Գտնվում էր Արմ Յփրատի հովտում ընկած Աշկալայի փոքրիկ դաշտում: Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ գավառակի (գյուղախումբ) կենտրոն: Վերջինս գրավում էր Էրզրումի գավառի արևմտյան հատվածը, որը զգալիորեն հայաթափվել էր հիմնականում 1828-1829 թթ. արևմտահայերի մեծ գաղթի ժամանակ: Աշկալայի երբեմնի հայաբնակ գյուղերից էին Բերձորը (թրք.Persor), Տանձուտը , Կտավերանքը (թրք.Çatveren), Քարվորը (Քարոը , պահպանվել էին հայկական գերեզմանները, խաչքարեր), Բոնակապանը (համանուն հնագույն բերդով), Չրմիտը (Ջերմուտ), Սուսը , Լիճը , Բալընբերդակը (պահպանվել էին ամրոցի ավերակներ), Շողիկը (Շողան կամ Շողանիձոր , Սբ Կարապետ վանքի մնացորդներով) և: 1914 թ. Աշկալա ավանի ավելի քան 1300 բնակչից 310-ը հայեր էին (1820-ական թթ. վերջին 500 տուն էին):
3	Արծաթի (Արծրթի)	Սբ Նշան (հայ առաքելական), Սբ Աստվածածին (հայ կաթողիկե)	2	Գյուղի մոտակայքում էր գտնվում Սբ Գրիգոր Լուսավորիչ ավերակ վանքը, որն ուխտատեղի էր:
4	Արշնի (Արշունի)	Սբ Սինաս	1	Դպրոցը՝ Տիգրանյան :
5	Բլուր	Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Վահագնյան :
6	Բրդոնք			19-րդ դ. 1-ին 30-ամյակին զուտ հայաբնակ էր, սակայն մեծ գաղթից հետո լցվեց մահմեդական մուհաջիրներով (վերաբնակիչներով):
7	Գեղախոռ	Սբ Սարգիս	1	Դպրոցը՝ Գեղուհյան :
8	Գոմք	Սբ Հակոբ (Սբ Կարապետ)	1	Դպրոցը՝ Արշակյան :
9	Գրիչք (Կրիչք)	Սբ Թագավոր (Քրիստոս Թագավոր), Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Մամիկոնյան :
10	Դինարիգոմ	Սբ Սինաս	1	Դպրոցը՝ Վահանյան :

11	Դվնիկ	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Խոսրովյան: Դվնիկն ուներ Կարմիր խաչ անունով ուխտատեղի: Մոտակայքով հոսող Արմ Եփրատի վտակ Ցրտածոր (Սրտածոր) գետակի վրա կառուցված էր քարաշեն Սև կամուրջը (թրք. Karaköprü):
12	Երկան-մասուր (Երկան-Մանասուր)	Սբ Գևորգ		Գյուղը Արմ Եփրատի աջակողմյան համանուն վտակի հովիտն ընդգրկող Սարչամա գյուղախմբի հարավային մասում պահպանված միակ հայաբնակ գյուղն էր: Սարչամա գետի հոսանքն ի վեր ձգվող երբեմնի հայաբնակ գյուղերի շարքում հարկ ենք համարում առանձնացնել Վերին և Ներքին Գաղթառիճները (Կաղդարիչ, հնագույն Խաղտոյառիճ բերդի շրջանում), Շակավը, Մեկմասուրը (Մեյմանասուր), Ծվանցը (միջնադարում հայտնի էր Սբ Աստվածածին կամ Ծվանից անապատ վանքով և ամրոցով, (թրք. Zuvanç), Յոնչալուղը, Զրավանքը կամ Ծիրանեվանքը (համանուն մենաստանի մնացորդները), Հնձիկը (Հնձուկ , մոտակայքում՝ Սարչամի վրա, գտնվում էր Դեր վիշաղայի կամուրջը), Պգոփկանցը, Երիզան (թրք. Rizakent, մոտակա Աղջկա կամրջով), Զորթնքարը ևլն: Նշված բնակավայրերը հիմնականում հայաթափվել են 1828-1829 թթ. արևմտահայերի մեծ գաղթի ընթացքում, թեև մի մասում հայ կյանքը շարունակվել է մինչև 19-րդ դ.70-80-ական թթ.:
13	Երկնիստ	Սբ Հրեշտակապետ (Սբ Աստվածածին)	1	
14	Ըղտածոր	Սբ Հակոբ	1	Դպրոցը՝ Տրդատյան: Մոտակայքում կար գյուղատեղի՝ խաչքարերով և գերեզմանատնով:
15	Թագագյուլ			
16	Թարքունի (Թարխունի, Թաքուհունի)	Սբ Աստվածածին	1	
17	Թևրիզչիկ			
18	Թիթկիր			Հարևան (հյուսիսում) Պոչիկ կամ Փոչիկ երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էին հնագույն գերեզմանատեղի և խաչքարեր:
19	Թովալ-Չավուշ	Սբ Հովհաննես	1	Դպրոցը՝ Բագրատունյաց:
20	Թվանձ (Գանձակ)	Սբ Փրկիչ (Ամենափրկիչ), հայ կաթողիկե	2	Դպրոցը՝ Փրկչյան (առաքելականներիը): Գյուղի մոտ գտնվում էր Խանակտուր ուխտավայրը: Ուշ միջնադարում հիշվում է Գանձկա Սբ Գևորգ վանքը, որը գրչության հայտնի կենտրոն էր:

21	Իլիջա (Ջերմուկ)	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր)	1	Ղպրոցը՝ Լուսինյան : Հնագույն ժամանակներից հայտնի էր իր նշանավոր ջերմուկներով, որոնք քյուզանդական սկզբնաղբյուրները կոչում են Էլեգիա (< Եղեգիք): Մի փոքր արևելք՝ Արմ Եփրատի Քլուր վտակի վրա պահպանվել էր քարաշեն կամուրջ: Իլիջան գավառի մեծ բնակավայրերից էր՝ գյուղականի կենտրոն: 1914 թ. ուներ ավելի քան 1300 բնակիչ, որից շուրջ 1000-ը՝ հայ:
22	Խաչկավանք	Սբ Հարություն		Գյուղի մոտ՝ Խաչափայտ (թրք.՝ Dumlucağ) լեռան ստորոտին գտնվում էր միջնադարում մեծ հռչակ վայելող Սբ Խաչ վանքը (Խաչեվանք) ՝ սրբատեղի ջերմուկով: Ավանդության համաձայն՝ այստեղ 7-րդ դարից պահվում էր Քրիստոսի (Տիրոջ) Սբ Խաչափայտի մասունքը:
23	Խնդեմեղեք (Խեղեմեղեք, Խնդամուց)			Միջնադարում այստեղ է գտնվել Խանտամուց Սբ Ստեփաննոս անապատը՝ Ծաղկավետ կամ Խաչափայտ լեռների հվ-արևելյան ստորոտին: Կարնո գավառի այս հատվածն ընդգրկում էր Արմ Եփրատի ակունքների շրջանը, որը մինչև 19-րդ դ.1-ին 30-ամյակը զուտ հայաբնակ էր: 20-րդ դ. սկ. տեղի գրեթե բոլոր գյուղերում դեռ պահպանվել էին հայկական գերեզմանատներ, խաչքարեր ևլն (Աղտաղտ կամ Արտաղ , Թաֆթա կամ Դավթա , Քոշկ , Կիրակոսակ , Շիփակ կամ Ջիբաղ , Ծաղկի): Երբեմնի հայաբնակ գյուղերից էին նաև Կամբերը (Կանբիր) , Կարագյուրաքը (Խառագյուրեկ) , Գյունգյորմազը (մոտակայքում կար բերդի ավերակ):
24	Կայափա (Խայափա)	Եկեղեցի		
25	Կան (Քյան)	Սբ Փրկիչ (Ամենափրկիչ)	2	Հին դպրոցը՝ Փրկչյան : Էրզրումի նահանգի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 3000 հայ բնակիչներով: Ավանում կար 2 ուխտավայր՝ Լուսաղբյուր և Կաթնաղբյուր անուններով: Հին գերեզմանատանը կար 10 խաչքար: Կանում պահվել են ձեռագիր մատյաններ:
26	Կարահասան	Սբ Աստվածածին	1	Ղպրոցը՝ Մամիկոնյան :
27	Կարմիրվանք (Ղգըլքիլիսա)	Սբ Նշան	1	Գյուղի մոտ գտնվում էին համանուն վանքի ավերակները:
28	Կեզ (Գեզ, Կեց)	Սբ Մինաս	2	Ղպրոցներից մեկը՝ Արամյան : Գործել է նաև մանկապարտեզ: Կեզում պահվել է սրբացված ձեռագիր՝ «Շեկ Ավետարան»: Գյուղում կար ուխտավայր՝ Կիպրիանոս անունով: Միջնադարում հայտնի էր Կեց (> Կեա-Կեզ , հունարեն՝ Կեցեոն) ամրոցով և համանուն վանքով (Կեզուց վանք): Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչությամբ:
29	Կրճնկոց (Կոճնկոց)	Սբ Խաչ (Սբ Աստվածածին)	1	Գյուղում պահվել են ձեռագիր մատյաններ:

30	Հինձք	Սբ Խաչ և հայ կաթողիկե	2	Գյուղից մի փոքր հյուսիս կառուցված էր Կարմրու Սբ Աստվածածին (Կարմիր կամ Հնձուց վանք) մենաստանը, որի հիմնադիրը Սբ Սահակ Պարթևն է: Վանքում 1895-1896 թթ. բացվել էր որբանոց-դպրոց: Հինձքի շրջակայքում պահպանվել էին Կուսանաց անապատի ավերակները: Գյուղի ուխտավայրերից էին Հովհաննես Կոճեր վարդապետ և Սրբոց Հռիփսիմյանց քարայրն ու աղբյուրը: Հինձքում և վանքում պահվել են ձեռագիր մատյաններ: Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ որոշ տվյալներով ավելի քան 2000 հայ բնակչությամբ (1914 թ.):
31	Չիթող (Չիթահող)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Մեսրոպյան : Գյուղում պահվել են մեկից ավելի ձեռագիր մատյաններ: Գյուղի մոտ գտնվում էր Գետեվանքի (Մատնավանք) ավերակը: Արմ Եփրատի վրա կառուցված էր քարաշեն Փերուզբեյի կամուրջը: Գյուղում կար Նահատակ անունով ուխտավայր: Հարևանությամբ պահպանվել էր գյուղատեղի՝ հայկական գերեզմանոցով: Չիթողի շրջակայքում տարածվում էր Կարնո Շամբը (թրք.՝ Sazlıg, ինս՝ «ճահիճ»): Էրզրումի նահանգի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. 3000 հայ բնակչությամբ (գրեթե ամբողջովին հայաբնակ էր):
32	Ղարարզ (Խարարզ, Արծն)			Գյուղը գտնվում էր նշանավոր Արծն քաղաքի ավերակների մոտակայքում: Վերջինս միջնադարյան Հայաստանի բազմամարդ և վաճառաչախ քաղաքներից էր (որոշ տվյալներով՝ 11-րդ դ. կեսերին ուներ շուրջ 150000 բնակիչ): Գյուղը հայտնի էր իր Լուսաղբյուր, Կաթնաղբյուր (Կաթնապուր) և Կարմիր խաչ ուխտավայրերով: Ղարարզի գետակի վրա եղել է քարաշեն կամուրջ, իսկ մի փոքր հս՝ երևում էին Գեղավանքի ավերակները: Ղարարզը Էրզրումի գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1200-1300 հայ բնակչությամբ (1400-1500-ից):
33	Ղուշջի		1	
34	Սյուրդուլուք (Սյուդուլուք)			
35	Մուտուռկու (Մորկա, Մուտրուկի)	Սբ Հակոբ	1	Դպրոցը՝ Պարթևյան : Գյուղի մոտակայքում՝ Սբ Նշան լեռան լանջին, գտնվում էր Սբ Գրիգոր Լուսավորիչ վանքը (Մուտուռկու վանք): Պահվել են ձեռագիր մատյաններ: Նույն լեռան վրա գոյություն ուներ ուխտավայր: Մուտուռկայի մոտ երևում էին գյուղատեղիի մնացորդներ՝ գերեզմանատնով և խաչքարերով: Շրջապատը հարուստ էր տաք և սառը հանքային աղբյուրներով (Ժամկոչին աղբյուր, Այրի-գյուլ ևլն): Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. որոշ տվյալներով՝ 1500-2000 հայ բնակչությամբ: Հարևան Թասմաձոր և Քյոսա-Մամադ գյուղերը ժամանակին հայաբնակ են եղել:

36	Նորշեն	Սբ Հակոբ	1	Գյուղի անմիջական հարևանությամբ դեպի արևմուտք գտնվում էին Արջիկ (Արջոնք) և Արնքար երբեմնի հայաբնակ գյուղերը:
37	Շըխնոց (Աղբուրք)	Սբ Հովհաննես (Սբ Հովհան)	1	Դպրոցը՝ Կարինյան : Գյուղում պահվել են ձեռագիր մատյաններ, որոնցից առանձնակի հռչակ ուներ 11-րդ դ. ընդօրինակված « Շխնոց Ավետարանը » (ի դեպ, միակ փրկվածը Կարնո գավառի գյուղերում պահվող 33 գրչագրերից): Հայտնի էր նաև գյուղի « Եփրիանոս » ուխտավայրը:
38	Ումուղում (Բագնի)	Սբ Հակոբ	1	Դպրոցը՝ Սահակյան : Գյուղում պահվել են հնատիպ 2 գիրք, որոնցից նշանավոր էր սրբացված և արծաթակազմ « Ամենափրկիչը »: Եղել է նաև գրչագիր մատյան: Ստակայքում երևում էին 7 գյուղերի ավերակներ, որոնք հայտնի էին Բագնի (Արիբագնի < Բագինի՞, թրք.՝ Bakhti kariesi) ընդհանուր անվամբ: Պահպանվել էին մեծ քանակությամբ խաչքարեր, տապանաքարեր: Ումուղումը գավառի խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 1200 բնակչով, որից 1000-ը՝ հայ:
39	Չիֆթլիկ (Կուկայառիձ)	Սբ Հրեշտակապետ	1	Դպրոցը՝ Հայկազյան : Մեծ համբավ ուներ գյուղում պահվող գրչագիր Քինսենց Ավետարանը , որին ուխտի էին գնում: Վաղ միջնադարում այստեղ է գտնվել Կուկայառիձ (հուն.՝ Կուկարիզոն) բերդը: Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր, որի 1914 թ. 2100-ը գերազանցող բնակչությունից 1600-ից ավելին հայեր էին:
40	Պատիշեն (Բաղիշեն)	Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Սուրբգևորգյան : Գյուղում պահվել են ձեռագրեր: Հարևան Սուլք գյուղը ևս ժամանակին հայաբնակ էր:
41	Ջենիս (Ճինիս)	Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Լևոնյան : Ստակայքում պահպանվել էին տապանաքարեր և խաչքարեր: Գավառի առավել բազմամարդ գյուղերից էր, որի ավելի քան 1300 բնակչից 600-ը հայեր էին: Հարևան Նարդևան (Մարդևան) գյուղը ժամանակին հայաբնակ է եղել: Չի բացառվում, որ այստեղ է գտնվել հայ միջնադարյան մշակույթի հայտնի կենտրոն Սանդղկավանքը :
42	Սալաձոր	Սբ Սարգիս (Սբ Ստեփանոս)	1	Սալաձորի արևելյան հարևան Եսավանք (Իսավանք) գյուղում պահպանվել էին համանուն մենաստանի ավերակները: Ստակայքում պահպանվել էին խաչքարեր, տապանաքարեր:
43	Մնկառիձ	Սբ Մինաս	1	Դպրոցը՝ Արշակյան :
44	Սոգյուլթու (Բալըխլու)	Սբ Հարություն	1	Դպրոցը՝ Վաղարշյան : Գյուղի Բալըխլու (իսնա՝ «ձկնառատ») սրբացված աղբյուրն ուխտատեղի էր:

45	Մոուդ-Ջերմուկ (Մոուդ-Ջերմիկ)	Սբ Հրեշտակապետ	1	Դպրոցը՝ Լուսավորչյան : Գյուղում պահվել են ձեռագիր մատյաններ: Ուներ Սբ Մինաս անունով ուխտատեղի:
46	Օգբեկ (Օձբակ)	Սբ Թադևոս-Բարդուղիմեոս	1	Դպրոցը՝ Սմբատյան : Մի փոքր արևմուտքում գտնվող երբեմնի հայաբնակ Հայդարի (Հայտարի) գյուղի եկեղեցին կոչվել է Սբ Աստվածածին :
47	Օձնի (Օզնի)	Սբ Աստվածածին	5	Օձնիի առաջին դպրոցը կոչվել է Սմբատյան : Հետագա տարիներին բացվել է ևս 4 նախակրթարան (1914 թ. 550 երկսեռ աշակերտ): Օձնիում պահպանվել էր Սբ Հովհաննես Օձնեցի մատուռը, որը նախկինում եղել է վանք: Ավանի հարավային մասով հոսող Արմ Եփրատի վրա կառուցված էին Օձնիի և Մամադայի քարաշեն կամուրջները: Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. 2500-3000 հայ բնակչությամբ:

XIX դ. վերջին – XX դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր՝ **Այնալու կալե, Բազկառիձ, Բոնակապան, Գյունգյորմազ, Թամամձոր, Թաֆթա, Թոսիկ, Ջերդիկե, Ծաղկի, Կենեփե, Հնձիկ, Մեկվանսուր, Ուչքիլիսե, Չորթանքար, Չրըքլի, Օրթիզի**:

2) Դերջանի գավառ

Դերջանի գավառը գտնվում էր **Արմ Եփրատի** վերին ավազանում՝ ընդգրկելով նաև վերջինիս ձախակողմյան **Թուզլա** (ակունքների շրջանում՝ **Լակզոձոր**, պատմ. **Մանանաղի**) և աջակողմյան **Բլքաջուր** կամ **Միլիքար** վտակների ձորահովիտները: Հին վարչական բաժանմամբ կազմված էր **Վերին Դերջան** (արևելքը) և **Ներքին Դերջան** (արևմուտքը) գյուղախմբերից: **Դերջանի** միջնադարյան կենտրոնը **Բագառիձ** (բարբառային՝ **Փեքեռիչ**) բերդաքաղաքն էր, որին 19-րդ դ. 2-րդ կեսին փոխարինեց **Թուզլայի** Եփրատ թափվելուց ոչ հեռու գտնվող **Մամախաթուն** բնակավայրը (գերազանցապես թրքաբնակ էր, հայերը 1914 թ.՝ 125 հոգի): Գավառի կենտրոնական հատվածը գրավում էր **Դերջանի** արգավանդ **դաշտը**, որի հյուսիսային մասը կոչվել է նաև **Բագառիձի դաշտ**: Գավառի հայությունը ևս խիստ տուժել է օսմանյան բռնապետության տարիներին: 17-18 դ-ը. բռնի կրոնափոխությունն այստեղ ևս մեծ ծավալներ է ստացել: 1828-1829 թթ ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո հատկապես **Վերին Դերջանից** մեծ թվով հայեր և թյուրքախոս հույներ (վերջիններս, իրականում, նախկին հայեր էին, որոնք բյուզանդական տիրապետության շրջանում, հարելով քաղկեդոնականությանը, դիտվել են հայ-հոռոմներ, իսկ ավելի ուշ՝ հույներ) տեղափոխվեցին Ռուսական կայսրությանն անցած **Թռեղք** (ներկայումս՝ **Վրաստանի Հանրապետության Ծալկայի շրջան**): Այնուամենայնիվ, Մեծ Եղեռնի նախօրյակին **Դերջանի գավառում** ապրում էր հոծ հայություն (շուրջ 17000 մարդ): Հարկ է նշել, որ հայաբնակ գյուղերն առավել մարդաշատն էին (տե՛ս ստորև): Գավառի հայության շուրջ 85 %-ը բնաջնջվել է Մեծ Եղեռնի

տարիներին: Որոշ տվյալներով՝ 1917 թ. վերապրած դերջանցիների թիվը հասնում էր 2500-ի:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աբաղձոր (Աբեղաձոր)	Սբ Սարգիս	1	Մոտակայքում կար ավերակ վանք: Աբաղձորը (Աբեղաձոր) գտնվում էր Արմ Եփրատի ձախակողմյան Թուզլա (պատմ.՝ Մանանաղի) օժանդակի հովտում: Հարևան շատ գյուղեր դեռ պահպանել էին իրենց հայեցի անվանումները՝ Արիկ կամ Աերիկ , Բարձենք (Փարսենիկ աղճատումով), Բոնաշեն (Վերին և Ներքին) ևլն:
2	Աղադիր (Աղաթիր)	Սբ Կարապետ	1	Աղադիրը՝ հարևան Ծաղկարի (Ներքին) և Չանախչի հայաբնակ գյուղերի հետ գտնվում էր Արմ Եփրատի ձախակողմյան Խոտում (Ղրղղրմ) վտակի ստորին հոսանքի շրջանում: Վերջինիս միջին և վերին հոսանքով կային երբեմնի հայաբնակ գյուղեր, ինչպես օրինակ՝ Աստեղի , Բվիկ , Թառամուտ , Խոտում (շրջակայքում՝ 3 վանքերի մնացորդներով), Միրվանց , Սոզան :
3	Ապրանք	Սբ Փրկիչ (Սբ Հովհաննես)	1	Գյուղի արլ բարձրացող Հյոբեկ լեռան գագաթին գտնվում էր նշանավոր Ապրանից Սբ Դավիթ վանքը, որը հիմնադրել է Սբ Գրիգոր Լուսավորիչը (ում անունով նույնպես կոչվում էր): Վանքը կոչվել է նաև Ծակքարի (Ծաղկարի) Սբ Դավիթ : Հատկապես հռչակված են ուշագրավ արվեստով պատրաստված հսկա՝ 5-6 մ բարձրությամբ խաչքարերը, որոնցից 2-ը կանգուն են առ այսօր: Մեր օրերում էլ բավական լավ պահպանված պարիսպը կառուցվել է 16-րդ դ. հայտնի հոգևորական Մաղաթիա վարդապետ Դերջանեցու հոգածությամբ: Վերջինիս ջանքերով սրբատաշ քարերով կառուցապատվել է նաև մենաստանի շրջափակում բխող Լուսավորչի աղբյուրը : Հյոբեկի ստորոտին է գտնվել նաև Սբ Հովհաննես (Սբ Օհան) մենաստանը:
4	Ասպավերակ (Էսպեվերեկ)	Սբ Գևորգ	1	15-րդ դ հիշատակվում է Սբ Ամենափրկիչ եկեղեցին: Հարևան հայեցի անվանումներով երբեմնի հայկական գյուղերից էին Բակերը (թրք. Başköy), Շապկան (Շեքքե) , Սեմեկը , Սոսնկան ևլն:
5	Աստոյի գոմ	Սբ Սարգիս	1	
6	Բագառիձ	Սբ Աստվածածին, Սբ Հակոբ	1	Գտնվում էր Արմ Եփրատի ձախափնյակում Բագառիձի արգավանդ դաշտակի կենտրոնում: Ավանում պահպանվել էր հնագույն ավերակ բերդը, որի պատերին կային սեպագիր արձանագրություններ: Բագառիձից հս՝ Եփրատի ոլորանի շրջանում կային մի շարք հայանուն՝ երբեմնի հայաբնակ գյուղեր՝ Խոզբրիկ , Խնձորեկ , Տաճար (Tecer աղճատումով), Քելմիզի (վանքի մնացորդներով), Քամխոր (Կոմսաձոր) ևլն: Դերջանի ամենախոշոր բնակավայրն էր՝ 1914 թ. 1500-1800 հայ բնակչությամբ (2500-ից):

ՀԱՆԵԼՎԱԾ

Է (ԺԳ) փաթիլ, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015

ՎԷՎ համահայկական հանդես

7	Բուլք (Փողկա գյուղ)	Սբ Գևորգ	1	Մոտակայքում էր Էնգեջ Սբ Կարապետ ավերակ վանքը: Հարևան Մեղիքար (Միլիքե) գյուղը նախկինում հայաբնակ է եղել: Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչով:
8	Գառնբերդակ	Սբ Գևորգ	1	Մի փոքր հվ գտնվում էր Թոփրախկալե բերդը: Մոտակայքով հոսող Ջորջնաջուր գետակի հովտում (թափվում էր Արմ Եփրատ) պահպանվել էին Ճճեվանքի (< Ջորջնավանք) ավերակները:
9	Գասպոյի գոմ			
10	Գյորդաշ			
11	Գոմձոր			Գտնվում էր Թուզլա (Մանանաղի) գետի աջափնյակում: Գոմձորից անմիջապես հվ՝ նույն գետի ձախափնյա ձորահովիտներում ընկած էին Բնջրիկ, Գիրվանք, Եղեգի, Շիրնի (Շիրինի), Ջրիգոմեր, Տում ևն երբեմնի հայաբնակ գյուղերն ու ագարակները (մի մասը հիշատակվում է դեռ 10-րդ դ.՝ կապված թոնդրակեցիների շարժման հետ):
12	Թառո			
13	Թեջղե (Տաճատա)			
14	Խաչաղ (Հայ Խաչաղ, Խաչողներ, Ներքին)	Սբ Աստվածածին (Սբ Երրորդություն)	1	
15	Խաչաղ (Քուրդ Խաչաղ, Խաչողներ, Վերին)	Սբ Աստվածածին		Մի փոքր հվ-արևմուտք՝ Արմ Եփրատի աջ ափին, գտնվում էր Խլածորի Սբ Գրիգոր (Սբ Լուսավորիչ, քողերեն աղձատումով՝ Simkōrik) ավերակ վանքը:
16	Խաչգեղ	Սբ Մինաս (Սբ Պողոս-Պետրոս), Սբ Հովհաննես	1	Մոտակայքում Սբ Խաչ հնագույն վանքի ավերակներն էին: Պատմական Բազմադրյուր ավանն է, որը հիշվում է թոնդրակեցիների շարժման հետ կապված: Շրջակա՝ նախկինում հայաբնակ գյուղերից էին Խարխուրը, Քաջքիկը, Քարնկեցը ևն: Խաչգեղից հս ձգվող Դումանյուի լեռների (պատմ. Սմբատաբերդ) շրջանը Դերջանի գավառի առավել հայաթափված հատվածն էր, թեև այստեղ էլ քիչ չէին հայկական կյանքի պահպանված հետքերը: Նման գյուղերից էին Թուսը, Խշտիկը (Խըշկո, կից էր ավերակ Խշտկո վանքը), Կապանը, Կարաքիլիսան (թրք.«սև եկեղեցի»), Սոսը, Քիլիսեջիկը (թրք.«եկեղեցատեղ») ևն:
17	Խաչիկյանի գոմ (Խաչիկ- օղլու գոմ)	Սբ Նշան (Սբ Աստվածածին)	1	
18	Խարխին (Քարջիլ)	Սբ Աստվածածին (Սբ Լուսավորիչ)	1	Մոտակայքում պահպանվել էին վանքի ավերակներ:

19	Խնձորի (Խնձրի)	Սբ Թաղևուս	1	Գավառի ծայր հս-արևմտյան՝ Քայրուրթին սահմանակից շրջանի միակ հայաբնակ գյուղն էր: Շրջակայքը նախկինում համատարած հայաբնակ է եղել, ինչի մասին են խոսում բազմաթիվ հայեցի տեղանունները կամ պահպանված հուշարձանները՝ Աղամչաղամ (մոտակայքում՝ վանքի մնացորդներ), Գելենգեչ (< Գեղականջ), Թողոս (Վերին և Ներքին), Միսկիխ (< Մեծգեղ), Ուզունխաչ (մոտակայքում՝ վանքի մնացորդներ):
20	Ծաղկարի (Ծակքար, Ներքին)	Սբ Աստվածածին	1	Հարևան Վերին Ծաղկարի կամ Ծակքար քրդաբնակ գյուղի մոտ պահպանվել էր Սբ Նշան ավերակ վանքը: Վանքին գրեթե կից՝ Կրզկալե (Ղրզղալա , թրք. «աղջկա կամ կույսի բերդ») գյուղում է գտնվել բյուզանդական աղբյուրներում հիշվող Պարթենից դղյակը (հունարեն՝ παρθένα-«կույս»): Մենաստանի հետքեր կային նաև Վ. Ծաղկարիից մի փոքր հվ՝ Եփրատի ափին գտնվող Վանքուկ գյուղում (Վանկունց Սբ Լուսավորիչ):
21	Կզըմնաղարա			
22	Կոթեր (Քյոթուր)	Ս Գևորգ	1	Մոտակայքում էր Սբ Սարգիս վանքը, որը կոչվել է նաև Մաղաքիայի մենաստան (Մաղաքիա Դերջանեցու անունով): Արմ Եփրատի և Թուզլայի (Մանանաղի) միախառնման մոտ կառուցված էր Կոթերի կամուրջը : Հանդիպակաց ափին բարձրացող Սուրբ Ներսես լեռան ստորոտին երևում էին պատմական Սուրենաշեն բերդի և ավանի ավերակները: Կոթերը գավառի առավել մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչությամբ:
23	Հերանի (Ներքին)	Սբ Հովհաննես	1	
24	Հյոլենք (Հոլանգ)			Դերջանի գավառի ծայր արևելյան Քարմաքսըզ (< Քառնակույս) գետակի հովտի միակ հայաբնակ գյուղն էր: Գյուղի հիմնական բնակիչները հայկական ծագումով հույներ էին: Այս շրջանում հայ և հայ-հոռոմ (հայ քաղկեդոնականներ, որոնք «հույն» էին դիտվում) բնակչությունը գերակշռել է մինչև 1829-1830 թթ. մեծ գաղթը: Հայ և հույն բնակչությամբ գյուղերից էին Աղագեղը , Քարմաքսըզը (< Քառնակույս), Դարագեղը (Ձորագյուղ), Կարմրիկը , Շոռաղը (Աղյուստ), Քարերը , Քյոսեկերը (Կաշե) ևլն: Վերոհիշյալ գյուղերի մի մասը հիշվում է դեռ 10-րդ դարում թոնդրակյան շարժման առնչությամբ:

25	Հողեկ	Սբ Փրկիչ	1	
26	Ղարաղուլախ (Անջըկա)	Սրբոց Վարդանանց (Ջորավարաց)	1	
27	Ղումլար (Խումլար)	Սբ Նշան (Սբ Փրկիչ)	1	
28	Ղուրիղուլ (Խուրիղուլ)	Սբ Հովհաննես (Սբ Գևորգ)	1	
29	Մամախաթուն (Դերջան)			Հայտնի էր գյուղի միջնադարյան իջևանատունը:
30	Սանց	Սբ Լուսավորիչ (Սբ Սարգիս)	1	Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչությամբ:
31	Սիջնկա			
32	Չամուրդերե (Վերին, Մանուկի Չամուրդերե)	Սբ Աստվածածին		
33	Չանախչի	Սբ Խաչ (Սբ Մինաս)	1	
34	Չխըլնոց (Չխըլլոց, Չըբ-նըս)	Սբ Հովհաննես	1	Գավառի առավել մեծ գյուղերից էր՝ 1914 թ. ավելի քան 1000 հայ բնակչով:
35	Սարիկայա	Սբ Աստվածածին	1	Մի փոքր արլ գտնվում էր Թերբիսեն (< Գարպսակ) երբեմնի հայաբնակ գյուղը: Գավառի առավել մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1100 հայ բնակչով:
36	Վարդուկ (Վարդիկ գոմ)	Սբ Գևորգ (Սբ Լուսավորիչ)	1	Գյուղի հյուսիսում բարձրացող Սբ Մարիամի (թրք. Mayram-dagları) լեռների ստորոտին գտնվող Ղչաղ և Չաթախ գյուղերում պահպանվել էին հայկական վանքերի մնացորդներ:
37	Վժան	Մայր Աստվածածին (Սբ Գեվորգ)	1	
38	Փիրիզ (Բրիս)	Սբ Ստեփաննոս (Սբ Երրորդություն)	1	Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչությամբ:

19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր՝ **Ավջեն** (ավերակ եկեղեցիով), **Արևանց** կամ **Երևանց** (**Արավանս**), **Բուն**, **Կարահուսեյին**, **Կզըլջա**, **Միատուն**, **Քաղջինա**:

3) Բայբուրթի (Բաբերդ) գավառ

Բայբուրթի (Բաբերդ) գավառն ընկած էր **Էրզրումի նահանգի** հյուսիսային հատվածում՝ գրավելով մասամբ՝ **Ճորոխի** միջին ավազանը և, ամբողջությամբ՝ վերջինիս ձախակողմյան գլխավոր **Բլուր** վտակի (վերին հոսանքում՝ **Լորի**) գետահովիտը: Սահմանակից էր, հյուսիսից և արևմուտքից **Խաղտյաց (Պոնտական)** լեռներով՝ **Տրապիզոնի նահանգին**, հարավից **Քոփի (Կապույտ)** լեռներով՝ **Էրզրումի Դերջան**, իսկ արևելքից՝ նույն

նահանգի **Իսպիր (Սպեր)** գավառներին: Մինչև 17-րդ դարի կեսերը գավառը գրեթե զուտ հայաբնակ էր: Սակայն նույն դարի վերջից սկիզբ առած օսմանյան վայրագությունները, որոնք կիրառվում էին ինչպես զենքի ուժով, այնպես էլ մոլեռանդ մահմեդական հոգևորականության խրախուսանքով և գործուն մասնակցությամբ, բայրուրթցի մեծաթիվ հայերի հարկադրեցին կան հեռանալ բնօրրանից և կան իսլամ ընդունել (դրանք հիմնականում քաղկեդոնականներն էին): Այս գործընթացը հատկապես աղետալի ծավալներ ընդունեց 18-րդ դ. առաջին տասնամյակներին: Դրա հետևանքով **Բայրուրթի (Բաբերդ)** տասնյակ բնակավայրեր բռնի «թրքացվեցին», ավերվեց ու անայացավ գավառի հայկական վանքերի և սրբավայրերի մեծագույն մասը: Գավառի հայությունը զգալիորեն տուժեց նաև 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, որին հաջորդեց տեղի մի քանի հազար հայերի (շուրջ 1000 տուն) գաղթը **Ռուսական կայսրությանն** անցած **Ախալցխա:** Հայ բնակչության թիվը շարունակաբար նվազել է նաև 19-րդ դարի ողջ ընթացքում: Մասնավորապես, այստեղ միայն 1895-1896 թթ. կոտորածներին զոհ գնացին ավելի քան 1000 հայեր: Սրանով հանդերձ, Մեծ Եղեռնի նախօրյակին **Բայրուրթի (Բաբերդ)** գավառում ապրում էին զգալի թվով հայեր՝ շուրջ 21000 մարդ: Գավառի կենտրոնը **Ճորոխի** երկու ափերին տարածվող համանուն բերդաքաղաքն էր, որը 1914 թ. ուներ ավելի քան 2000 տուն բնակիչ (12000-15000 մարդ): **Ճորոխի** աջ ափին՝ բարձրադիր քարաժայռի վրա, գտնվում էր հինավուրց **Բայբերդ (Բայսբերդ)** ամրոցը: Քաղաքի հայ բնակչությունը, որի թիվը հասնում էր 4000-ի (500 տուն), գերազանցապես կենտրոնացած էր գետի ձախափնյա 5 թաղերում՝ **Շինգյախ** (եկեղեցին՝ **Սբ Հովհաննես**, որը նույնացվում է միջնադարյան **Սբ Քրիստափոր** վանքի հետ), **Ջիգրաշեն** (եկ.՝ **Չարխափան Սբ Աստվածածին**), **Կալեր** (եկ.՝ **Սբ Նշան**, այստեղ էին ապրում նաև փոքրաթիվ հույները, որոնք ունեին եկեղեցի), **Թաշթաղ** (եկ.՝ **Սրբոց Հրեշտակապետաց** և **Սբ Աստվածամայր** կամ **Մայր եկեղեցի**, կար նաև մատուռ՝ **Սբ Ստեփաննոս**) և **Նորաշեն** (եկ.՝ **Սբ Աստվածածին**): Միջնադարում քաղաքի եկեղեցիներն ավելին են եղել: Մասնավորապես, 14-րդ դարում հիշատակվում է **Սբ Սիոնը**, իսկ **Սբ Պողոս-Պետրոս** եկեղեցին վերածվել էր մզկիթի և վերանվանվել **Ուլու-ջամի:** Ի դեպ, չի բացառվում, որ նախկին հայկական սրբավայրեր են եղել նաև **Բայրուրթի (Բաբերդ)** թուրքական մյուս 8 մզկիթները: Միջնադարյան **Բաբերդում** գործել է նաև **Բերդակն** կամ **Բերդական** անապատը (**Սբ Աստվածածին**): **Բայրուրթը (Բաբերդ)** թեմական առաջնորդանիստ էր: Գործում էր 3 հայկական դպրոց՝ **Արամյան** (երկսեռ), **Սուրբ Մեսրոպյան** (տղաների) և **Վարդուհյան** (աղջիկների): 1915 թ. գավառի (ներառյալ՝ քաղաքը) 21000-ի հասնող հայությունը զազանաբար ոչնչացվեց: 1917 թ. հայկական կազմակերպությունների կողմից անցկացված վիճակագրության տվյալներով՝ վերապրածների թիվը (ի բացառյալ ժամանակավորապես բացակայող անձինք) մի փոքր էր միայն գերազանցում 500-ը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալմշկա	Սբ Նշան (մատուռ)	1	
2	Առյուծկա (Արուզկա)	Սբ Աստվածածին (Սբ Նշան)	1	Հայտնի էր գյուղի Աղջեններթ (թրք. «սպիտակ դրախտ») ուխտատեղին: Հարևան Վարիջնա երբեմնի հայկական գյուղում պահպանվել էին Սբ Նշան վանքի ավերակները:
3	Ավերակ	Սբ Աստվածածին, Սբ Հովհաննես	1	Հայտնի էր Լուսաղբյուր ուխտատեղին: Մոտակա Հարորթի և Սշավերակ գյուղերը նախկինում եղել են հայաբնակ: Քովի լեռնանցքի մոտակայքում կար իջևանատուն (խան): Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. ավելի քան 1000 հայ բնակչով:
4	Բալախոռ (Պալախոր)	Սբ Լուսավորիչ, Սբ Կարապետ	1	Մոտակայքում էին գտնվում Սբ Գևորգ Զորավար վանքի (Պալախորու վանք) ավերակները: 17-րդ դ. վերջինիս թեմն ուներ 12 հարկատու գյուղ: Վանքի ենթակայության ներքո էր գտնվում նաև Բաբերդ քաղաքի Սբ Հոհան եկեղեցին (հետագայում Սբ Քրիստափոր վանք): Բալախոռի շրջակա երբեմնի հայկական գյուղերից հայտնի էին Արմանան (երմնի) , Բաբուստանը , Գյոքլերը , Հաղրակը , Սևքարը ևն: Գյուղի անունը հունարեն էր. նշանակում է «հին գյուղ» (<i>Παλιχωριόν</i>):
5	Բլրակ	Սբ Աստվածածին, Սբ Փրկիչ	1	Դպրոցը՝ Ներսեսյան : Ուխտավայրերից հայտնի էին Կապույտ Խաչ հինավուրց խաչքարը, Սբ Կյուրակե մատուռն իր բուժիչ աղբյուրով: Ըստ տեղացիների՝ հին Բլրակը գտնվել է մի փոքր հս` Կապույտ Խաչի շրջանում և ունեցել է շուրջ 700 տուն բնակիչ, այդ թվում՝ հույներ: Վերջիններիս եկեղեցու հետքերը բլրակցիները կոչում էին « Հռոմի ժամտուն »: Գյուղի մոտակա լեռան վրա երևում էին մարդանման քարակույտեր, որոնք տեղացիները կոչել են « Հարսնքար »:
6	Բլուր	Սբ Գևորգ	1	Գյուղում գտնվում էր ոմն Սահակ Եպիսկոպոսի դամբարան-մատուռը: Շրջակայքում հայտնի էին Սբ Եղիա , Սբ Մարտիրոս և Սբ Վարվառե ուխտավայրերը (երբեմնի վանքեր): Բլուրը գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ գյուղախմբի կենտրոն (թրք. nahıye), և 1914 թ. ուներ շուրջ 3000 բն., որից 1000-ը՝ հայ: Բլուրի շրջանում, որն ընդգրկում էր Ճորոխի համանուն վտակի վերին ավազանը (սահմանակից էր Տրապիզոնի նահանգին), մեծ թիվ էին կազմում ժամանակին բռնի մահմեդականացած հայերով բնակեցված գյուղերը՝ Աղբկի (« Եղեգի »), Աշուկա (թրք. <i>Aşukka</i> աղձատումով), Բագեսի , Թախսինի , Իշխանձոր , Լորի (մի ձեռագիր հիշատակարանում նշված է որպես «բանակետղ», իմա՝ «գորակայան»), մոտակայքում՝ ավերակ Սբ Լուսավորիչ վանք), Խանձար (Խանգար), Հեղնի , Ճանձի , Փուշկա , Օսկուրիչ (« Ոսկետափ ») ևն:

7	Բնջրկա (Փնջրկա)	Սբ Աստվածածին (Սբ Համբարձում)		Գյուղում կար նաև մատուռ: Հայտնի էր Բնջրկայի և Վարգահանի միջև գտնվող սրբացված ինքնաբուխ աղբյուրը՝ տեղական բարբառով «Ակը», որն ուխտատեղի էր:
8	Երկի (Էրկի)	Սբ Աստվածածին, Սբ Լուսավորիչ	1	Գյուղում և շրջակայքում կային բազմաթիվ ուխտավայրեր՝ Խաչին լույս , « Միայն-սուրբ » (իմա՝ «միայնակ Սուրբ»), Սբ Սարգիս , Սբ Վարվառե , Սբ Օհան ևլն:
9	Թոմնա (Դոմնա)	Սբ Համբարձում	1	Շրջակայքում պահպանվել էին Սբ Աստվածածին , Սբ Թորոս (Սբ Թեոդորոս ՝ հայտնի որպես Խրախճանյաց անապատ կամ Խախճավանք) և Գոմրձագի մենաստանների ավերակները: Ուխտավայրերից հայտնի էին Սբ Նազարը (նախկին վանք) և Սբ Վարվառեն :
10	Լտոնք (Լուսոնք)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Ղազարյան : Գյուղում գործել են « Ջավարյան » գրադարանը՝ շուրջ 2000 կտոր գրականությամբ, երիտասարդաց միություն: Մի փոքր արմ Ներքին Լտոնք վայրում, գտնվում էր Սբ Գրիգոր Լուսավորչի հայտնի վանքը: Շրջակայքը ժամանակին եղել է խիտ բնակեցված, ինչի ապացույցը 7 գյուղատեղիների առկայությունն էր: Դրանցից Վարիգեղի տներն ու եկեղեցին 20-րդ դ. սկ. դեռ կանգուն էին: Գավառի առավել մեծ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչով:
11	Խայեկ (Հայեկ, Գեյիք)	Սբ Աստվածածին	1	19-րդ դ. 80-ական թթ. գործել է ևս 1 եկեղեցի: Շրջակայքում կար 2 ավերակ եկեղեցի (1-ը՝ Սբ Զորավար): Գյուղում հայտնի էին Խաչին լույսը , Լեշկին և Վարի ուխտատեղիները: Շրջակայքը ժամանակին զուտ հայաբնակ էր, ինչի մասին են խոսում գյուղանունները՝ Մամ (ձեռագիր հիշատակարանից հայտնի է Սբ Աստվածածին եկեղեցին), Տանձուտ , Վահանշեն (Վահանդա, Սբ Ստեփաննոս Նախավկա վանքի մնացորդներով), Քարավեր : Խայեկից սկսած դեպի հս՝ մինչև Խաղոյաց (Պոնտական) լեռներ ընկած տարածքի երբեմնի հայ բնակչությունը զանգվածաբար բռնի մահմեղականացվել էր: Տեղի գրեթե բոլոր բնակավայրերը պահել էին հայեցի անվանումները՝ Աբրանց , Աշոտի , Արդոստա , Բաղնիք , Հավնոց , Ճանձուլ , Սալամուտ ևլն: Առանձին գյուղերում պահպանվել էին նաև վանքերի ավերակներ՝ Սբ Լուսավորիչ (Ջումավանք) , Սբ Հակոբ (Սեյիդ Յաղուբ) , Հավուց վանք (Հավնոց) ևլն:

12	Խնձավերակ (Հնձավերակ)	Սբ Գևորգ (Սբ Աստվածածին)		
13	Խուփս (Խուփուս)	Սբ Փրկիչ	1	Հնագույն եկեղեցին (հիշվում է 13-րդ դ.) կոչվել է Սբ Աստվածածին : Գյուղից շուրջ 4 կմ հս-արևելք գտնվում էր Սբ Քրիստափորի վանքը (Խուփուզի վանք): Միտակա գյուղատեղիում դեռ պահպանվել էին տների հետքերը: Հավանաբար այստեղ է եղել 13-րդ դ. հիշվող Տարոնցիք (Սբ Ամենափրկիչ) մենաստանը: Խուփսի ուխտատեղիներից հայտնի էին Սբ Եղիշեն և Սբ Վարվառեն : Գյուղից մի փոքր հվ գտնվող Չթանոց (Չիթանոս) գյուղը նախկինում հայաբնակ է եղել: Գավառի առավել մեծ բնակավայրերից էր՝ 1914 թ. 1000-1200 հայ բնակչությամբ:
14	Գիվ (Գիվ)	Սբ Աստվածածին	1	Գյուղում կար ուխտատեղի՝ « Կարմիր փայտ » անունով (թրք. Kızılkütük):
15	Կոզի (Քրզի, Վերին)	Սբ Պողոս- Պետրոս	1	Գյուղում և շրջակայքում գտնվում էին հետևյալ ուխտավայրերը՝ Կապույտ Խաչ, Սբ Կարապետ, Սբ Հովհաննես, Ղավախներ (թրք. «բարդիներ»), Սբ Ստեփանոս: Վ. Կոզից հս՝ Խաղտյաց (Պոնտական) լեռների ստորոտին ընկած Արմուղլու, Արկենիս, Գլխոնց (Սբ Լուսավորիչ ավերակ վանքով), Թորոսցոնց (թրք. Toronsöz), Հափուշկա, Մանկա (թրք. Menge), Վաղշեն (Սբ Ստեփանոս ավերակ վանքով) և Տանձուտ գյուղերի բնակիչների նախնիները կրոնափոխ եղած հայեր էին:
16	Հինդե (Հընդե)	Սբ Աստվածածին(Սբ Աստ վածամայր)	1	Գյուղում կար նաև մատուռ (Սբ Լուսավորիչ): Եկեղեցիներում պահվել են ձեռագրեր: Կար 3 ուխտատեղի: Միտակայքում գոյություն ունեին իջևանատներ (Հընդեի խաներ):
17	Մալասա (Մալանսա)	Սբ Հովհաննես	1	Միտակայքում գտնվում էր Միլեզլի Սբ Նշան (Յոթը Խոտաճարակաց) ավերակ վանքը: Հայտնի էին Միլեզլի կամ Միրազլի Սբ Թովմա, Սբ Խաչ, Սբ Սիմոն և Սբ Վարվառե ուխտավայրերը: Հարավում՝ հարևան Թավուկվանք (Թարվանք) գյուղում, երևում էին սրբավայրի մնացորդներ: Մալասայից հյուսիս՝ Ճորոխի աջ և ձախ ափերին ընկած էին Աղնցոց, Իշբոնց (Ըշպետնոց), Տաճրակ (Տաճարաք), Փուկավ (թրք. Püköy աղճատումով) ևլն երբեմնի հայաբնակ գյուղերը:
18	Նիվ(ե)	Սբ Աստվածածին	1	Նիվում հայտնի էր Թովսմանուկ ուխտավայրը: Գյուղը գտնվում էր Ճորոխի աջակողմյան Բլուր վտակի վերին հովտում: Դեպի արլ տարածվող Խարդի փոքր դաշտակում գտնվում էին երբեմնի հայաբնակ Ներքին (Վարի) Կոզի և Խարդ (Խարթ) գյուղերը:

19	Ջահաննց (Չահանաս)	Սբ Հովհաննես(Սբ Աթանասգինե)	1	Գյուղում հայտնի էին Սբ Գևորգ, Սբ Հակոբ, Սբ Մինաս, Վերիգեղ, Սբ Քրիստափոր (Սարիսուլթան) ուխտատեղիները: Ջահաննցից հվ՝ Ճորոխի ափին գտնվող Կան բնակավայրը 14-րդ դ. հիշվում է որպես քաղաքագյուղ: Վերջինիս, ինչպես նաև հարևան՝ հիմնականում գետից հվ ընկած գյուղերի բնակիչների նախնիների մեծագույն մասը բռնի կրոնափոխ եղած հայեր էին (Աբուշտա, Աղբանոց, Բագաղբյուր, Մուշագրակ, Վերին Տանձուտ, Քորմանց-Քորմաս, Օրթուղի <Որտոթի են>):
20	Ռումելի (Ռումուլեի, Հռոմի)	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր)	1	Գյուղում հայտնի էին Սբ Մինաս և « Քամիգրավոր » ուխտավայրերը: Ռումելիից արմ գտնվող Աղոնք (Վերին և Ներքին, թրք. Ahsünk) և Կեզ (Գեզ) գյուղերը նախկինում հայաբնակ են եղել:
21	Ռուշտի (Ղուշտի, Դրուշտի)	Սբ Հովհաննես Մկրտիչ, Սբ Քրիստափոր	2	Հայտնի էին Սբ Ավետարան և Սբ Ստեփաննոս ուխտատեղիները:
22	Սարաջուղ	Սբ Սարգիս (մատուռ)	1	
23	Սղըրջի	Սբ Աստվածածին	1	Գյուղն ուներ մատուռ՝ Սբ Խաչ անունով: Նախկինում հայաբնակ է եղել հարևան Քունազ գյուղը:
24	Սուրբ Թորոս	Սբ Աստվածածին (Սբ Սարգիս)	1	Սուրբ Թորոսի հարևան Չրփղընքս (<Ճապկենց), Չորախ (Ճորոխ) և Մինո գյուղերը նախկինում հայաբնակ են եղել:
25	Վարզահան (Վարձեհան)	Սբ Աստվածածին, Սբ Համբարձում	1	Գյուղի դպրոց էին հաճախում նաև Քնջրկա, Դումնա և Խնձավերակ հարևան գյուղերի մանուկները: Վարզահանի շրջակայքը հարուստ էր պատմա-ճարտարապետական հուշարձաններով. « Ցորը քույր վանքեր » համալիրը՝ սրբացված և ուխտատեղի համարվող 7 աղբյուրներով, Սբ Կարապետ (ուներ 2 եկեղեցի) և Կարմիր վանքերը : Նշված հուշարձանները կիսավեր էին: Մինչև 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը կանգուն էր Մայր եկեղեցի տաճարը: Մոտակայքում կար 12 խաչքարից կազմված ուխտավայր: Գյուղը հայ ազատագրական շարժման ակնավոր գործիչ Սեպուհի (Արշակ Ներսիսյան, 1872-1940) ծննդավայրն է: Ջորավարի ջանքերով Առաջին աշխարհամարտի նախօրեին այստեղ հիմնվել է երկհարկանի գիշերօթիկ «երկրորդական» (միջնակարգ) վարժարան, ուր հաճախել են նաև թուրք երեխաներ: Վարզահանից հվարլ գտնվող Ծախծիք (թրք. Zağzi) և Դանշմանդ գյուղերը նախկինում հայաբնակ են եղել:

26	Քարավերակ	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր), Սբ Գևորգ	1	Գյուղի մոտ կար ուխտատեղի՝ Սբ Խաչ (Ուրբաթու Սբ Նշան) անունով, որն ըստ ավանդության՝ նախկինում վանք էր: Գյուղը Քայբուրթի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 2000 հայ բնակչությամբ: Քարավերակի շրջակա երբեմնի հայաբնակ գյուղերից էին Բերնան (Բեռնակ), Խաչկան (Խաչկա), Գշլաղը, Զամայան (Զեմելե) ևն: Նշված գյուղերից նկատելիորեն հվ՝ Քայբուրթի և Դերջանի սահմանագլխին բարձրացող Ջոկա լեռնագագաթի մոտ գտնվող Խախտ գյուղում երևում էին Սրբոց Քառասնից վանքի ավերակները: Գյուղի մոտ պահպանվել էր նաև իջևանատուն (խան):
27	Քանթաթ (Քսանթաթ)	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր), Սբ Եղիա	1	Դպրոցը՝ Հայկազյան : Շրջակայքում պահպանվել էին վանքերի մնացորդներ, որոնց ժողովուրդը կոչում էր « Քսանթաթի վանքեր »: Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1800 հայ բնակչով: Քսանթաթի հարևան որոշ գյուղերի բնակիչների նախնիները բռնի մահմեդականացած հայեր էին (Անբախսա, Հազեղ կամ Օխեղ, Սիսնա, Հնձավերակ ևն):
28	Քրիստիսի (Քեստիսի)			
29	Օձտեղ (Օձգեղ, Ուստեղ)	Սբ Աստվածածին, Սբ Թորոս, Սբ Հակոբ	1	Գյուղի մոտ գտնվում էր Սբ Լուսավորիչ (Ուստեղավանք) ավերակ վանքը, որը նաև ուխտատեղի էր: Վերջինս 17-րդ դ. ունեցել է բավական հարուստ թեմ՝ 18 գյուղ և քաղաքի Սբ Հրեշտակապետ եկեղեցին:

4) Իսպիրի (Սպեր) գավառ

Իսպիրը (Սպեր) գտնվում էր **Քայբուրթի գավառից** հս-արևելք՝ ընդգրկելով **Ճորոխի** ողջ վերին հոսանքի շրջանը (**Չորմայրիի** գյուղախումբը), ինչպես նաև նույն գետի միջին ավազանի արևմտյան խոշոր հատվածը: Սահմանակցում էր հյուսիսից, **Խաղոյաց (Պոնտական) լեռների** արևելյան ճյուղերով՝ **Տրապիզոնի նահանգին**, հս-արևելքից՝ **Խոտորջուր-Կիսկիմին (Բերդագրակ)**, հարավից, **Մեղրաբերի** փոքրիկ **լեռնաշղթայով**՝ **Թորթումին**, իսկ հարավից, **Քոփի (Կապույտ)** լեռներով՝ **Էրզրումի** գավառի **Օվաջիկի** գյուղախմբին: Կենտրոնը **Ճորոխի** աջ ափին՝ ոլորանի մոտ գտնվող համանուն ավանն էր՝ պատմական **Շեն Սմբատավանք** (թրք.՝ İspirkalesi կամ Kasaba, պահպանվել էին բերդը և գետի վրա կառուցված հնագույն կամուրջը): 1914 թ. ուներ ավելի քան 400 տուն բնակիչ, որից 90-100-ը՝ հայեր (շուրջ 800 անձ): Հարևան **Քայբուրթ** և **Կիսկիմ-Բերդագրակ** գավառների սման **Իսպիրը** ևս 17-18-րդ դդ. ենթարկվեց բռնությունների և կոտորածի, ինչի արդյունքում տեղի հայ բնակչության զգալի մասը հարկադրված ընդունեց մահմեդականություն՝ հորջորջվելով «թուրք» կամ «լազ»: Գրեթե ամբողջությամբ ավերվեցին և ամայացան հայկական վանքերն ու մենաստանները: Հետևանքներն աղետալի էին. արդեն 19-րդ դ. կեսերին

Իսպիրի (Սպեր) գավառում հայերը փոքրամասնություն էին կազմում: Սրանով հանդերձ, բնակավայրերի մեծագույն մասը պահպանել էր իր բուն՝ հայեցի անվանումները, տեղ-տեղ անգամ՝ ազգային սովորույթներն ու մայրենի բարբառը: Գավառի ազգային ինքնությունը պահած հայերը (1914 թ. 4.5-5 հզ. մարդ) գրեթե ամբողջությամբ բնաջնջվեցին Մեծ Եղեռնի տարիներին:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Էզեձոր (Այգեձոր)	Սբ Ամենափրկիչ		Գյուղում պահվել է սրբացված Կարմիր Ավետարանը :
2	Թշաձոր (Դշաձոր)	Սբ Աստվածածին		Ճորոխի հարավային ափին խոյացող Գոհասաձ լեռնագագաթի հարավային դժվարանատելի ստորոտին էր գտնվում գավառի միակ կանգուն Սբ Հովհաննես Մկրտիչ (Քարձորու) վանքը, որը կարևոր ուխտատեղի էր ոչ միայն հայերի, այլև նրանց կրոնափոխ ու թրքախոս հայրենակիցների համար, որոնք այն կոչում էին Hüseyin Dede : Ըստ ավանդության՝ վանքում պահվել են Սբ Հովհաննես Մկրտչի մատուցները: Պահվել է նաև սրբացված հնագույն Ավետարան :
3	Խոզաղբյուր	Սբ Նշան	1	Դպրոցը՝ Տրդատյանց :
4	Կաժ	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Ռուբինյան :
5	Հիշեն	Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Վարդանյան :
6	Հողեկ	Սբ Հակոբ		
7	Հունուտ	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Աշոտյան : Միջնադարում այստեղ գործել է Հունուտ (Հուտ) կամ Սբ Դավիթ վանքը: Հունուտը կազմված էր համանուն գետակի ձորահովտով մինչև Ճորոխ (հարավում) ընկած առանձին գյուղակ-«թաղերից», որոնց բնակչության նախնիների գերակշիռ մեծամասնությունը կազմում էին բռնի կրոնափոխ եղած հայեր էին (1914 թ. ավելի քան 2000 մարդ): Ճորոխի վրա կառուցված էր Ոսկեվանսի (Ասքիվանսի) կամուրջը:
8	Ձկնաջուր (Չինաջուր)	Սբ Փրկիչ	1	Դպրոցը՝ Սմբատյան : Գյուղը գտնվում էր Պարխարյան լեռների արև ստորոտից սկիզբ առնող և Ճորոխ թափվող Սայրոջուր գետակի վերին հոսանքի շրջանում: Վերջինս մինչև XVIIդ. 2-րդ կեսը զուտ հայաբնակ տարածք էր, ուր աշխույժ հոգևոր-մշակութային կյանք էր ընթանում Այնցի (Այոցի) Սբ Աստվածածին և Խոտհարք վանքերում: Տեղի գյուղերից հայտնի էին Բոխուտը , Կաղամախուտը և այլն: Նույնը կարելի է ասել հարևան (արևմուտքից) Տափձոր գետակի ձորահովտի մասին, որի գյուղերն անգամ 20-րդ դ. սկզբներին գրեթե անաղարտ պահել էին հայեցի անվանումները՝ Բլուր , Գանձիձոր , Խանձ , Կապան , Մազոնց , Սինամեչ (Շինամեչ) , Քարափ և այլն:

9	Ճիպոտ (Չիփոթ)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Պարթևյան : Այս, նաև Օձուտ և Հողեկ գյուղերը Չորմայրի (Չյորմեյի) գյուղախմբի այն բնակավայրերն էին, որոնք պահել էին ազգային նկարագիրը: Նշված շրջանը ևս անմասն չի մնացել 17-18-րդ դդ. տեղ գտած վայրագություններից, որոնց հետևանքը գյուղախմբի բնակչության համատարած մահնեղականացումն էր: Մի շարք գյուղեր պահել էին հայեցի անվանումները (Բախչավանք, Բերձոր, Գոշմրշատ, Զեգրեկ-Չագագրակ, Վարդենիկ, Քարբակ են): Չի բացառվում, որ Բախչավանքում է գտնվել միջնադարյան նշանավոր հոգևոր կենտրոն Չորմայրվո (>Չորմայրի) կամ Կանչնուտ վանքը:
10	Մանց (Մացանց, Մաթուսանց)	Սբ Սարգիս	1	Դպրոցը՝ Մուշեղյան : Գյուղի մոտ գտնվում էր Սբ Գևորգ վանքի (Մեցանց անապատ) ավերակները: Մանցից հվ և հվ-արևմուտք՝ Ճորոխի ափին գտնվող Կան, Մաթենց և Նշենուտ գյուղերի բնակիչների նախնիները բռնի իսլամ ընդունած հայեր էին:
11	Մեզեգրեկ (Մեծկագրակ)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Լուսավորչյան : Մեզեգրեկից արևմուտք գտնվող երբեմնի հայաբնակ գյուղերից հայտնի են Արնանցը (Արնաս), Գնդագրակը (թրք. Cinderek աղձատումով), Գուբանցը, Թաշագրակը, Շիկնաձորը (թրք. Şeyhmansur), Պատրկենցը (Սպերի Բագրատունիների «պատրիկ» տիտղոսից, թրք. Badirgens) կլն:
12	Շահրիստանց	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Վահանյան : Հարևան գյուղերի հիմնական մասում բնակվում էին բռնի կրոնափոխ հայերի սերունդներ՝ Գակոնց, Գոմփոր, Կորդիկանց, Մողշեն (=<Մոզշեն), Շիկանց, Տգանց (պահպանվել էին Սբ Միքայել Հրեշտակապետ կամ Տգանց անապատ մենաստանի ավերակները):
13	Զուրակենց (Չուրհանկես)			
14	Սպեր (Իսպիր, Գասսպա)	Սբ Աստվածածին (Սբ Գևորգ)	1	Դպրոցը՝ Բագրատունյան : Սպեր գետակի ողջ հովիտը ժամանակին եղել է զուտ հայաբնակ: Պահպանվել էին նաև գյուղերի հայեցի անվանումները՝ Ակնդոց, Ափշրենց, Կրանց, Զիրանց, Հափշկանց, Զիթանք, Զրքշան, Տանկես, Տանձուտ, Տափ, Քարոնց, Քարկոնց կլն: Սպեր ավանից հս՝ Ճորոխի ձախափնյակում գտնվող Դարբնի, Խանդակ, Ճանքար (թրք. Cenker) գյուղերի բնակիչների նախնիները բռնի իսլամ ընդունած հայեր էին:

15	Վարիզոնց (Վարզենց)	Սբ Աստվածածին		Ըստ ավանդության՝ Վարիզոնցից հսարևելք՝ ձորոխի աջ ափին գտնվող Նորգյալս (< Նորգեաղ) ավանը եղել է Հայոց արքաների (Բագրատունի) ամառանոցը:
16	Տշանց (Դշանց)	Սբ Փրկիչ	1	Դպրոցը՝ Վարդիկյան : Տշանցի շրջանը (ձորոխի ձախ ափին՝ Սպեր ավանից արմ) զանգվածաբար բնակեցված էր բռնի մահմեդականացած նախկին հայերի սերունդներով: Այդ գյուղերից էին՝ Աբրանց, Բոխիձոր, Դիտանոց, Էզրքեր (Ագրակքար), Հրդամուշ, Սեմագրակ (Շենագրակ) ևլն: Նույն շրջանին անմիջապես արևմուտքից սահմանակից ձորահովտի գյուղերը ևս նախկինում եղել են գուտ հայաբնակ (Անկեճիկ, Դրախտ, Չոփուրկենց, Սատաղ ևլն):
17	Քյոչ (Վարդիկ, Վարդուկ)	Սբ Աստվածածին		Քյոչը գավառի հսարևելյան Վսերքի գյուղախմբի միակ հայաբնակ գյուղն էր, որ պահպանել էր ազգային նկարագիրը: Նշված շրջանի կենտրոն Վսերք (թրք. Kalefisrik) բերդավանն ու հարևան Ծաղկոց (թրք. Zakos), Կողանց, Մամկանց կամ Մամիկոնյանց (թրք. Mamans), Սեմագրակ կամ Շենագրակ, Տանձուտ, Տափ գյուղերի բնակիչների նախնիները բռնի կրոնափոխված հայեր էին:
18	Օձուտ	մատուռ		

19-րդ դ. վերջին- 20-րդ դ. սկզբին հայաթափ եղած գյուղեր՝ **Աղբրիկ, Գանձ, Կարաքյաֆիր (Ղարաղայա), Ղազենց, Սալորջուր (Սալաչոր)**:

5) Կիսկիմի (Բերդագրակ) գավառ

Կիսկիմի (Բերդագրակ) գավառը գրավում էր **Էրզրումի նահանգի** հյուսիսային մասը՝ հիմնականում ընդգրկելով ինչպես **ձորոխի** միջին ավազանը, այնպես էլ վերջինիս աջակողմյան **Օլլթի** օժանդակի գետաբերանի շրջանը և ձախակողմյան **Խոտորջուր** և **Պարխար** վտակների ձորահովիտները: Սահմանակից էր հսարևմուտքից, **Պարխարյան** լեռնաշղթայի **Թաթոս** կամ **Սբ Թաղևոս** և **Քաջքարի** կամ **Խաչքարի** բազուկներով՝ **Տրապիզոնի նահանգին**, հսարևելքից՝ **Ռուսական կայսրության Բաթումի մարզին**, հվարևելքից, **Մեղրաբերի կամ Հարկևորի լեռներով՝ Թորթումին**, իսկ հվարևմուտքից՝ **Իսպիրին (Սպեր)**: Գավառի կենտրոնը **Կիսկիմ կամ Օկդեմ** (թրք.՝ նաև Kasaba) ավանն էր **ձորոխի** աջափնյակում: 1914 թ. 200 տունը գերազանցող բնակչությունից 60-ը հայեր էին՝ ցրված **Բուն Կիսկիմ, Բաղդասարենց, Խաչոյենց, Բրդիկենց, Ճապկնուտ** (բրբ.՝ Ճապկունտ) և **Մուդրուշենց** «թաղ»-գյուղակներում (հատկանշական երևույթ էր **Իսպիրի** և **Կիսկիմի** գավառների բնակավայրերի մեծ մասի համար): Գավառի քաղկեդոնական հայերը թեև 18-րդ դ. վերջին, չտանելով

թուրքական բռնությունները, իսլամ էին ընդունել, սակայն հիմնականում պահել էին հայկական սովորույթներն ու մայրենի բարբառը, ինչպես նաև սերտ առնչություններն իրենց քրիստոնյա ազգակիցների հետ: Այդ իսկ պատճառով նրանց կոչում էին «**կես-կեսներ**» (իմա՝ «**կես հայ, կես թուրք**»): Մահմեդականացած գյուղերը գրեթե անաղարտորեն պահել էին պատմական հայեցի անվանումները՝ **Աշմաշեն** (<**Արշամաշեն**), **Արսիս** (պատմ. **Տայքի Արսյաց փոր** գավառի կենտրոնը), **Բերդագրակ** (գավառի նախկին կենտրոնը՝ համանուն բերդի ավերակներով, թրք. Peterek աղձատումով), **Էրկինիս** (**Էրզինձ**, **Մամիկոնյանների** հնագույն **Էրախանի** բերդը), **Իշխան** [ղարծյալ **Մամիկոնյանների** իշխանանիստ կենտրոններից մեկը, **Ներսես Գ Տայեցի** կաթողիկոսի (641–661) կողմից կառուցված հռչակավոր ավերակ վանքով)], **Իցաձոր**, **Ծափոր**, **Կիրվանս**, **Կիցփորուտ**, **Հունկամեզ**, **Ձորկանց կամ Ձորկանց**, **Միքելենց**, **Պարխար** կամ **Պարխալ** (X դ. **Տայքի Դավիթ Կյուրապաղատի** կողմից քաղկեդոնական ծեսով կառուցված տաճարով), **Պահլ** (**Բալխ**), **Քարեկամուրջ**, **Օկդեմ** (**Եկդեմ**) ևլն: **Կիսկիմի գավառի** քրիստոնյա հայ բնակչության գերակշիռ մեծամասնությունը կենտրոնացած էր վարչամիավորի հվ-արևմտյան՝ **Պարխարյան** լեռնաշղթայի **Քաջքար** և **Վարշամբեկ** (**Վերջնբակ**, **Վարշամակ**) լեռնագագաթներից սկիզբ առնող **Խոտորջուր** գետակի դժվարամատչելի ձորահովիտներում ցրված գուտ հայաբնակ գյուղերում, որոնք դիտարկվում էին զգալի ինքնավարություն վայելող **Խոտորջուր համայնքի** «թաղերը»: Վերջինս կազմված էր 3 հիմնական շրջանից՝ ա. **Բուն Խոտորջուր** (**Ճորոխի** ձախափնյակում), բ. **Կարմիրք** և գ. **Մոխրկուտ** (**Մոխրակույտ**), որոնք միասին ունեին 10000-ի հասնող հայ բնակչություն (հայկաթողիկե եկեղեցու հետևորդներ): **Կիսկիմի գավառի** մի շարք գյուղերի հայեր շարունակում էին մնալ հայառաքելական եկեղեցու հետևորդներ (տե՛ս ստորև): 1915 թ. **Կիսկիմի գավառի** հայերի մեծագույն մասը նույնպես ենթարկվեց բռնագաղթի և զանգվածային ոչնչացման: 1917 թ. վերջերից բնօրրանից հեռացած կամ բռնագաղթից վերապրած խոտորջուրցիները (1500–2000 մարդ), վերադառնալով գավառ, փորձեցին վերականգնել ավերված բնակավայրերը և նոր կյանք սկսել: Սակայն ռուսական բանակի նահանջը և թուրքական զորքերի հակահարձակումը խիստ վտանգավոր իրավիճակ ստեղծեց: Դա չվիատեցրեց խոտորջուրցիներին, որոնք, ձևավորելով **Զինվորական խորհուրդ**, **Օգոստինոս Մչանյանի** ղեկավարությամբ ձեռնամուխ եղան հայրենի գավառակի պաշտպանությանը: Արտաքին աշխարհից լիովին կտրված հայկական գինված խմբերը, 1918 թ. հունվարի վերջից սկսած, գրեթե 5 ամիս շարունակ հերոսաբար հետ էին մղում **Խոտորջրի** վրա անընդմեջ գրոհող թուրքական կանոնավոր զորաջոկատների և խաժամուժի գերագանց ուժերի կատաղի գրոհները՝ հաճախ ծանր կորուստներ պատճառելով նրանց: **Կարսի** անկման լուրը (1918 թ. ապրիլի 25) վերջնականապես կտրեց օգնություն ստանալու որևէ հույս, ինչից հետո հայերը **Խոտորջրից** խուճ-խուճ հեռացան **Արլ Հայաստան**, **Աբխազիա**, **Վրաստան** և այլուր:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Բերդագրակ			Հայկական եկեղեցիներ 19-րդ դարում դեռ պահպանվել էին: Ցավոք, դրանց հետագա վիճակի մասին տվյալներ չունենք: Բերդագրակին արևելքից սահմանակից Չորղվանք գետակի ձորահովտում գտնվում էր համանուն գյուղը (թրք. Dörtkilise պարզ թարգմանությամբ), որի բնակիչները բռնի իսլամ ընդունած քաղկեդոնական հայեր էին: Պահպանվել էր Տայքի Դավիթ Կուրապահատի (966-1000) կառավարման ընթացքում կառուցված բազիլիկ տաճարը:
2	Ծեսկունց (Զիզկունց)	Եկեղեցի (հայկաթողիկե)		Մոտակայքում՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ մատուռ:
3	Կիսկին (Օկղեմ)՝ Կասպանբաշի «թաղ»-արվարձանով	Սբ Հակոբ	1	Դպրոցը՝ Հայկազյան: Կապանբաշի հայերը կաթոլիկ էին:
4	Կուտրաշեն (Կողրաշեն)	Սբ Աստվածածին	1	Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչով:
5	Նիխալս (Նիխաղ)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Փրկչյան:
6	Փրթիկներ	Եկեղեցի	1	
Բուն Խոտորջուր				
1	Արեզի (Արեզդեմ)	Սբ Աստվածածին	1	Ուներ Սբ Հակոբ անունով մատուռ: Արեզին Խոտորջրի ամենահարավային՝ գյուղախմբի նախադուռը համարվող Չորբերանի մոտ գտնվող, «թաղ»-գյուղակն էր: Գետի հանդիպակաց աջ ափին բարձրացող քարաժայռին երևում էին Ծրարաջուր բերդի ավերակները:
2	Գեղուտ (Քեղուտ) և Յուցուլա	Սբ Աստվածածին	1	Հայտնի էին Սբ Գևորգ և Սբ Ստեփաննոս մատուռ-ուխտատեղիները: Յուցուլայում հայտնի էր Լուրտ Աստվածածին ուխտատեղին:
3	Խանդածոր Ստորին (Վարի)	Սբ Երրորդություն		
4	Խանդածոր Վերին (Վերնագեղ)	Մայր Աստվածածին (Սբ Գևորգ)	1	Խանդածորի 2 մասերում և շրջակայքում հայտնի էին Ազատարար Սբ Կույսի, Գբերու Սբ Վարդանանց, Սբ Դավիթ Մարգարե, Երկնային Սբ Խաչ, Սբ Հովհաննես Կարապետ, Սբ Հովսեփ, Սբ Պետրոս-Պողոս մատուռները և ուխտավայրերը: Խանդածորի մոտով հոսող գետակի վրա կար մի քանի կամուրջ՝ Կլախնցի, Փանտունի, Քաշմիշինի : Նշանավոր էր նաև «Օրհնյալ ծառ» սրբատեղին: Խանդածորի Բորաղբյուրը բուժիչ էր համարվում: 2 «թաղերը» միասին 1914 թ. ունեին ավելի քան 1500 բնակիչ:

5	Կաղմխուտ	Սբ Հովհաննես Մկրտիչ, Սբ Պետրոս-Պողոս Առաքյալների		Հայտնի էին Սբ Խաչ մատուռ-ուխտատեղին, Սբ Հովհաննեսի պուրակը («մարին») համանուն մատուռով և աղբյուրով:
6	Կիսակ (Գիսակ)	Սբ Գրիգոր Լուսավորիչ	1	Կենտրոնական Լիպարիտնց (բրբ. Լիպարինց կամ Լիպայտինց) թաղամասում երևում էին Լիպարիտ իշխանի բերդի հետքերը, որի մոտ՝ նույն անձնավորության գերեզմանը: Ըստ ավանդության՝ ժամանակին մոտակա « Խոլ մարի » (իմա՝ « Խոլ մարի ») անտառակից կավե խողովակներով ջուր է բերվել բերդ: Կիսակում էին գտնվում Խոտորչքի համայնքապետարանը, առաջնորդարանը: Հին Կիսակ գյուղատեղիում (բնակիչները տեղափոխվել էին հարևան Խանդաձոր) կար ուխտատեղի՝ Սբ Հրեշտակապետ :
7	Կրման	Սբ Հակոբ Մծբնացի, Սբ Երրորդություն		Հայտնի էին Հետնագրակի Սբ Գևորգ գույգ մատուռները՝ գիհու սրբազան պուրակով, Կրմանի Հանգրվան (բրբ. « Հանկրմառ ») ագարակի Սբ Աստվածածնի Վերափոխման ուխտատեղի-մատուռը: Կրմանի Գասպարանց «թաղում» Մեծ Բերդ և Փոքր Բերդ անունով քարաժայռեր կային (թերևս՝ հնում դրանց վրա ամրոցներ են եղել):
8	Ճիճապաղ	Սբ Փրկիչ (Սբ Հիսուս Փրկիչ)	1	1910 թ. սկսվեց Սբ Երրորդություն նոր եկեղեցու կառուցումը, որը չհաջողվեց ավարտել: Տարբեր «թաղերում» և շրջակայքում կար մի քանի ուխտատեղի մատուռ՝ Ալերկանց Սբ Գևորգ , Անեղինց Սբ Անատոլիա կամ Լուրտ Աստվածածին , Երևնաողու Սբ Գևորգ , Ամենափրկիչ կամ Խոջիկանց Խաչ , Սբ Խաչ , Խաչեր կամ Սբ Գևորգ , Սբ Սիմեոն Ծերունի ևն: 1914 թ ուներ ավելի քան 1000 բնակիչ:
9	Միջինթաղ (Թուրոշենք, Թուրոշենց դռներ)	Սբ Անարատ Հղության	1	Հայտնի էին Ազատարար Սբ Կույսի , Ազվնի (Ազվնախաչ) , Սբ Գևորգ , Սբ Գավիթ , Սբ Պետրոս-Պողոս Առաքյալների (նախապես եկեղեցի էր) մատուռները:
10	Սունենց (Սունինց)	Սբ Հարություն (Սբ Հարություն Կենսարարին)	1	Սունենցի թաղամասերում և շրջակայքում հայտնի էին Ազատարար Սբ Կույս , Սբ Աստվածածին (իին եկեղեցին էր՝ համանուն սրբազված բուժիչ աղբյուրով), Սբ Գևորգ , « Խորոզի Սուրբ », Հիսուսի Հարություն և Սբ Մինաս (2-ն էլ՝ Կովնոցու կամ Կովնոցու ամառանոցում), Սբ Սարգիս : 1914 թ. Սունենցն ուներ շուրջ 1300 բնակիչ:

11	Վահնա (Վահնեն թաղ)	Սբ Հովհաննես Մկրտիչ	1	Ըստ ավանդության՝ եղել է Վահան Մամիկոնյանի ամառանոցը, որտեղից էլ՝ անվանումը:
Մոխրկուտ և Կարմիրք				
1	Կարմիրք (Կարմրակ)	Սբ Աստվածածին, Սբ Հովսեփ Աստվածահայր	1	Կարմիրքի շրջանում հայտնի էին հետևյալ մատուռ՝ ուխտավայրերը՝ Ազատարար Կույս (նախկին վանք), Սբ Աստվածածին , Սբ Գևորգ Զորավար , Սբ Գրիգոր Լուսավորիչ , Սբ Եղիաբեթ , Լուրս Աստվածածին , Սբ Հովհաննես Մկրտիչ , Սբ Սարգիս Զորավար (Հինգեղ գյուղատեղիում), Տիրուհի Կույս Մարիամ : 1914 թ. գյուղն ուներ ավելի քան 1300 հայ բնակիչ:
2	Օջնախ (Որջնահղ)			Օջնախը Կարմիրքի ամառանոցն էր՝ Ճորոխի աջ ափին: Այստեղ 451 թ., պարսիկների դեմ պարտիզանական պայքարի ընթացքում զոհվեց Հմայակ Մամիկոնյանը (Վարդան Մամիկոնյանի եղբայրը): Գյուղից հս գտնվում էր Աստվածամոր հինավուրց բերդը: Օջնախին (Որջնահղ) կից՝ Կարմիրքի Հանկարեք բնակելի ամառանոցում կար մատուռ՝ Սբ Աստվածածին անունով:
3	Մոխրկուտ Ներքին (Մոխուրկուտ, Մոխրակույտ)	Սբ Պետրոս-Պողոս Առաքյալների	1	Կար 2 ուխտատեղի՝ Սբ Գևորգ (Սբ Կորուստ) և Սբ Թեոդորոս :
4	Մոխրկուտ Վերին (Մոխուրկուտ, Մոխրակույտ) և Գորգանց (Ագրակ, Նորանա)	Սբ Աստվածածին, Սբ Աստվածածին (Գորգանցում)	1	« Քաճոնց դովի » (ինս՝ «դռներ») թաղամասում գտնվում էր Սբ Ստեփաննոս Նախավկա մատուռը: Մոխրկուտները միասին 1914 թ. ունեին 1800–2000 հայ բնակիչ:

XIX դ վերջին – XX դ սկզբին փոքրաթիվ քրիստոնյա հայ բնակչություն է եղել նաև **Կիսկիմի** հյուսիսային՝ Ճորոխի ձախափնյա **Պարխար (Պարխալ)** վտակի հովտում գտնվող **Խևակ** գյուղում:

Բ/ Երզնկա քաղաք

Հայաստանի հնագույն բնակավայրերից էր՝ **Արևմտյան Եփրատի** աջ ափին, գետի միջին հովիտն ընդգրկող **Երզնկայի** արգավանդ **դաշտում**: Հնում կոչվել է **Երեգ** կամ **Երիգա**: Հայտնի է նաև **Երեզկան**, **Երզինկան** (որտեղից՝ թրք. Erzincan անվանաձևը) կամ **Եզնկա** անուններով: **Երիգա-Երզնկայում** էր գտնվում Հին Հայաստանի 8 գլխավոր մեծյաններից «ոսկեմատն» **Անահիտ Մայր դիցուհու** կենտրոնական տաճարը, ուր կանգնեցված էր «**Մեծ Տիկնոջ**» ոսկե արձանը: Քրիստոնեության ընդունումից անմիջապես հետո **Սբ Գրիգոր Լուսավորչի** կողմից մեծյանի տեղում կառուցվեց **Սբ Աստվածածին** վանքը (Տիրամոր տաճար կամ **Երիգայի անապատ**՝ հայտնի, որպես «**տեղին չարչարանաց Լուսաւորչին**»): 20–րդ դարի սկզբին

համանուն **սանջակի** (թրք.՝ Erzincan sancağı) կենտրոնն էր, **Էրզրումի նահանգի** 2-րդ խոշոր բնակավայրը: 1914 թ. ուներ շուրջ 30000 բնակիչ, որից գրեթե կեսը՝ ավելի քան 13000-ը, հայ: Քաղաքում եղել է նաև փոքրաթիվ հույն համայնք (ուներ եկեղեցի): **Երզնկան** թեմական առաջնորդանիստ էր: Հայ բնակչությունը կենտրոնացած էր 4 թաղերում՝ ըստ 4 եկեղեցիների: Դրանք էին՝ **Սբ Երրորդություն, Սբ Նշան (Սբ Խաչ), Սբ Սարգիս** և **Սբ Փրկիչ** (հիշվում է դեռ 13-րդ դ.): Պահպանվել էր նաև **Սբ Աստվածածինը**, որը, սակայն, չէր գործում: Միջնադարում հիշատակվում է նաև **Սբ Գևորգ** եկեղեցին: Հարկ է նշել, որ քաղաքի եկեղեցիները 18-րդ դարի վերջի կառույցներ էին, քանի որ **Երզնկան**, գտնվելով խիստ երկրաշարժավտանգ գոտում, բազմիցս ավերվել է կործանիչ երկրաշարժերից, ինչի հետևանքով հայկական սրբավայրերը մշտապես վերականգնվել են:

Երզնկայի եկեղեցիներում պահվել են զգալի թվով գրչագիր մատյաններ (ցավոք, ստույգ թիվը հայտնի չէ): Մեծ հռչակ ուներ հատկապես **Սբ Սարգսում** պահվող, զարդանախշերով փղոսկրե կազմ ունեցող «**Կոլոշ Ավետարանը**», որը սրբացված էր: **Երզնկան** ուներ մեծաթիվ հայկական ուսումնական հաստատություններ՝ վարժարաններ և նախակրթարաններ: Որոշ տվյալներով, Մեծ Եղեռնի նախօրյակին քաղաքում կար տղաների 10 և աղջիկների 2 նախակրթարան ու վարժարան՝ 100 ուսուցչով և 2500 աշակերտներով: Առանձնապես աչքի են ընկել **Ընկերական կամ Սուրբփրկչյան** (հիմն. 1879 թ.), **Կեդրոնական** (հիմն. 1870 թ., նախապես՝ **Լուսավորչաց**), **Արամյան, Եզնիկյան, Քրիստինյան** (վերջինս՝ աղջիկների) վարժարանները: **Երզնկայում** կար մի քանի մանկապարտեզ՝ «**ծաղկոց**»՝ 3 դաստիարակուսուցչով և 250-300 սաներով: 19-րդ դարի վերջին գործել են նաև **Հայկազյան** մասնավոր դպրոցը և **Նարեկյան** նախակրթարանը:

1908 թ. հետո ստեղծված համեմատաբար բարենպաստ իրավիճակի շնորհիվ քաղաքում աշխուժացել է մշակութային կյանքը: «**Եկեղյաց կրթասեր միության**» ջանքերով ստեղծվել է թատերական խումբ, որը ներկայացումներ է տվել ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում (**Մահմուդցիք, Մեծագրակ, Մեղուցիկ, Մթննի**): Ընդ որում, **Երզնկայում** թատերական կյանքը որոշակի զարգացում է ունեցել դեռ 19-րդ դարի 70-ական թթ. վերջերին: Կառուցվել է անգամ հատուկ շենք, ուր, սակայն, թուրքական իշխանությունների կողմից ներկայացումներն արգելվել են: Իսկ 1885 թ. հարդանոցի վերածված այդ կառույցն այրվել է անհայտ հանգամանքներում: 1909-1911 թթ. **Երզնկայում** լույս են տեսել «**Արդի**» և «**Արոր**» շաբաթերթերը: **Երզնկան** հռչակված էր իր հմուտ արհեստավորներով: Հատկապես մեծ համբավ ունեին երզնկացի ոսկերիչներն ու մանուսայագործ վարպետները (մանուսան մեծ արժեք ունեցող հատուկ գործվածք է): 1915 թ. **Երզնկայի** և հարակից գյուղերի հայ բնակչությունը ենթարկվեց վայրագ բնաջնջման:

6) Երզնկայի գավառ

Համանուն սանջակի կենտրոնական գավառը գրավում էր **Արմ Եփրատի** միջին ավազանում տարածվող **Երզնկայի** արգավանդ **դաշտը**: Սահմանակից էր հյուսիսից, **Սուրբ Գրիգոր** (թրք.՝ **Սբնգոր**) և **Զիմանի** լեռներով՝

Տրապիզոնի նահանգին ու Բայբուրթին (Բաբերդ), արևելքից, Քեշիշ (Անահտական) լեռնապարով՝ Դերջանին, հարավից, Մերջանի կամ Տուժիկի լեռներով (Մնձուր)՝ Ղուզուջանին (Խուզիջան) և Դերսիմին (Խարբերդի նահանգ), իսկ արևմուտքից, Մեպուհ (թրք. Karadağ) լեռնազանգվածով՝ Կամախին: 17-րդ դարի սկզբին ջալալիների հրոսակների խժոժությունները պատճառ եղան գավառի հայ բնակչության մի զգալի հատվածի արտագաղթի համար: Էլ ավելի աղետալի էր զանգվածային բռնի մահմեդականացումը, որի հետևանքով տասնյակ գյուղերի հայեր (հիմնականում՝ հայ հոռոմներ) ժամանակի ընթացքում «թուրքացան»: Այնուամենայնիվ, **Երզնկայի գավառում Մեծ Եղեռնի նախօրյակին ապրում էր մեծաթիվ հայ բնակչություն (ավելի քան 15000 մարդ): Գավառի տարածքն աչքի էր ընկնում հայկական հնագույն և նշանավոր սրբավայրերով: Հատկապես մեծ թիվ էին կազմում հայկական վանքերը (ցավոք, մեծամասնությունն ավերակ էր կամ ամայի. տես ստորև): **Երզնկայի գավառի** հայ բնակչության գերակշիռ մեծամասնությունը նույնպես զոհ դարձավ Մեծ Եղեռնին՝ հիմնականում ոչնչացվելով **Կամախի** սարսափազդու և հայակեր կիրճում:**

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ագրակ	Սբ Թորոս (Սբ Թեոդորոս)	1	
2	Ախոռջուղ (Ախոռջիկ)	Սբ Մինաս	1	Գյուղում գտնվում էր Սբ Թորոս կամ Պաղապուրի վանքը:
3	Աղջաքենդ	Սբ Աստվածածին	1	
4	Բալարանագրակ			
5	Բարգոսեր (Բարկիձոր)			
6	Բզվան	Սբ Գևորգ, Սբ Նշան	1	Գյուղից հս գտնվող Քեշիտ (Կեչուտ) գյուղում գտնվում էր Սբ Եղիա վանքը: Բզվանից արլ գտնվում էր Նորգյախ (Նորգեաղ) բնակավայրը, որի բնակիչների նախնիները բռնի մահմեդականացած հայեր էին:
7	Բթառիձ (Փթառիձ)	Սբ Սարգիս	1	Խաչն թառլասը վայրում պահպանվել էր սրբատաշ քարերով կառուցված գետնափոր եկեղեցի: Գյուղից հս-արևելք՝ Քեշիշ դաղ լեռնաշղթայի հարավային ստորոտին գտնվում էր Սբ Նիկողոսի հռչակավոր վանքը (տես ստորև): Բթառիձի շրջակա բնակավայրերի մեծ մասը բնակեցված էր օսմանյան բռնապետության վաղ շրջանում իսլամ ընդունած հայերի (հունադավան) հետնորդներով: Հատկապես առանձնանում էր Ճիմին կամ Զիմին , պատմ. Ծումինա ավանը, որը Երզնկայի ամենախոշոր բնակավայրերից էր (1914 թ.՝ 1000 տուն «թուրք» բն.): Միջնադարում այստեղ հիշվում է Սբ Թեոդորոսի վանքը: Գյուղում պահպանվել էին 2 եկեղեցիների ավերակներ, որոնցից Սբ Գևորգը , ուխտատեղի էր թե՛ քրիստոնյա հայերի և թե՛ «թուրք» հորջորջվող բնակչության համար: Ընդ որում,

				մահմեդականներն այն կոչում էին Hidir-Eliaz (իմա՝ Սբ Եղիա): Բռնի մահմեդականացված շրջակա գյուղերից հայտնի էին նաև Գալա-ոփշը (Գալափափ) , որի մոտակա Անտուն վայրում կային 2 եկեղեցու ավերակներ, Չերմիկ (< Զերմիկ), Փշկըթաղ (<Քրկչաթաղ), Չորբերան, Արկա ևլն: Բթափճից արլ գտնվող Գալոներ քրդաբնակ գյուղում ևս կային եկեղեցու հետքեր: Նմանատիպ բնակավայրեր եղել են նաև Ճիմինից արևմուտք (Գերթաղ <Քարթաղ, Իրաղուխ-Ռաղուխ ևլն): Աջքի էր ընկնում հատկապես Ճիմինի հս-արևմտյան մասում՝ Քեշիշ դաղ լեռնաշղթայի ստորոտին գտնվող Չախրման (< Չարխափան) գյուղը, ուր պահպանվել էր Չարխափան Սբ Աստվածածին վանքը: Նույն գյուղից մի փոքր հս-արևմուտք՝ Եփրատի Չարխափան (թրք. Çakırtman) վտակի ափին, կառուցված էր Սբ Պողոս-Պետրոս մենաստանը: Վերջինիս շրջակա Վերին և Ներքին Քոշնկեր, Սալամուտ (թրք. Süleymanlı) գյուղերի բնակիչների նախնիները ևս երբեմնի բռնի կրոնափոխ հայեր էին:
8	Բլուր			
9	Բրաստիք խան			
10	Գյուլիջա (Վարդենոց)	Սբ Գևորգ	1	Գյուղում և շրջակայքում կար ևս 3 եկեղեցի (ավերակ կամ կիսավեր)՝ Սբ Աստվածածին, Սբ Թորոս և Սբ Ստեփանոս :
11	Գոմկա			
12	Դվնիկ	Սբ Սարգիս	1	
13	Երկան	Սբ Աստվածածին	2	Մի փոքր հվ՝ Մերջանի կամ Տուժիկի (Մնձուրի) լեռնաշղթայի հյուսիսում բարձրացող Երկան լեռնագագաթի արլ ստորոտին գտնվում էր Սբ Գևորգ հայտնի վանքը (Երկանի վանք), ուր պահվել են ձեռագրեր: Երկանը գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1000-ից ավելի հայ բնակչով:
14	Խանջյանի մեզրե և Ղազանջյանի բալանկա (փալամդա)			Երզնկացի մեծահարուստ հայերի ազարակներ էին: 1-ինը, որը Նշան Խանջյանի սեփականությունն էր, գտնվել է Ճանձիկեից մի փոքր հվ՝ Մերջանի կամ Մնձուրի լեռնաշղթայի ստորոտին: Մեզրեում գործել է Սբ Թադևոս-Բարդուղիմեոս մատուռ: 2-րդը Մեղուցիկի մոտ էր՝ Եփրատի ափին:
15	Խարաթուշ (Ղարաթուշ)	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր)		Միտակայքում գտնվում էր Սբ Թադևոս-Բարդուղիմեոս (Սրբոց Առաքելոց) ավերակ վանքը: Գյուղի հարևանությամբ գտնվում էին երբեմնի հայաբնակ Գսրմզոր կամ Գի Սբ Գևորգ (Սուրբ Գէորգ, հիշվում է Սբ Աստվածածին եկեղեցին) և Մաղաջուր (Միաջուր) գյուղերը: Ավելի արմ՝ Մերջանի կամ Տուժիկի լեռնաշղթայի հս-արևելյան լանջին, Արմ Եփրատի աջակողմյան Մերջան վտակի ափին գտնվում էր գավառի առավել նշանավոր վանքերից մեկը՝ Չարչարանաց Սբ Լուսավորչի կամ Տատասկի վանքը (հայտնի է նաև որպես Դալար կամ Մերջանի Սբ Օհան անունով):

16	Խնձորեկ	Սբ Աստվածածին	1	Պահպանվել էին Սբ Գևորգ վանքի մնացորդները: Գյուղում հայտնի էր Սբ Հովհան ուխտատեղին:
17	Ծաթգեղ	Սբ Աստվածածին	1	
18	Ծաթեր			
19	Կամուրջգլուխ բալանկա (փալանդա)			
20	Կարադիզին (Ղարատիկին)	Սբ Հրեշտակապետ	1	Գյուղից շուրջ 4 կմ արևելք բարձրանում է հռչակավոր Ոսկեբլուր (թրք. Altantepe) հնավայրը՝ նախաուրարտական և ուրարտական հուշարձաններով:
21	Կարաքիլիսա (Ղարաքիլիսա)	Սբ Աստվածածին	1	Մոտակա Սբ Մինաս լեռան վրա պահպանվել էին համանուն վանքի ավերակները:
22	Կարմրի (Էսեսիի հետ)	Սբ Գևորգ	1	Մոտակայքում էր Սբ Օգեսնտ(իոս) կիսավեր վանքը: Հայտնի էր Ալեմ Ջեռահ (ձերահ) ուխտավայրով:
23	Կյոլնցիք (Կելնցիք)	Սբ Թադևոս	1	Գյուղում կար ևս 2 չգործող կիսավեր եկեղեցի՝ Սբ Կարապետ և Սբ Հովհաննես անուններով:
24	Հայրապետի (Հարաբեդի)	Սբ Աստվածածին	1	Գյուղում գտնվում էր Հայրապետ Սբ Լուսավորիչ վանք-ուխտատեղին:
25	Հանդեսի (Հանդիսի, Հանդերձիք)			Մի ձեռագիր հիշատակարանի համաձայն՝ գյուղի եկեղեցին կոչվել է Սբ Սիոն : Հարևան Թըլխաս մահմեդականացած գյուղը միջնադարում հայտնի էր Թիլուխարձեն անունով: Նշված բնակավայրերն ընկած էին պատմական Բքթնո լեռան (թրք. Kazankaya) հյուսիսային ստորոտին: Նույն լեռնագագաթի շրջանի մյուս գյուղերից էին Տաճրակը, Քուրդգեղը, Տափը, Բրաստիքը, Ջրգնին (Ճրգնի), Դեղնաքը (թրք. Tığinkâr աղձատումով), Սգնուտը ևլն:
26	Հերանի (Հայրանի, Վերին)	Սբ Սարգիս	1	
27	Հոռոմ-ագրակ (Վարի-ագրակ)	Սբ Կիրակոս	1	Մոտակայքում կիսավեր Սբ Անարծաթ (Սրբոց Կոզմոսի և Դամիանոս) վանքն էր:
28	Ճանձիկե (Ճանձիխուղ)			
29	Մահմուդցիք	Սբ Աստվածածին, Սբ Ստեփաննոս	1	Գյուղում գործում էր գրադարան: Մոտակա մահմեդական Քյորքեզե գյուղի անունն ըստ էության եղել է Կիրակոսի : Գավառի մեծ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչով:
30	Մանթարա			
31	Մեծագրակ (Վերի-ագրակ)	Սբ Աստվածածին	1	
32	Մեղուցիկ (Մեղվըցիկ)	Սբ Նշան, Սբ Գևորգ	1	Մոտակայքում էր Սբ Կարապետ վանքը: Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1800-2000 հայ բնակչությամբ:
33	Մերթեկլի			

34	Մթննի	Սբ Հակոբ	1	Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2000 հայ բնակչությամբ:
35	Սիլագեղ	Սբ Աստվածածին (Յուդաբեր կամ Եղնաբեր Սբ Աստվածածին)	1	Եկեղեցին երբեմնի վանք էր: Գյուղում գոյություն է ունեցել ևս 1 եկեղեցի, որի մոտից բխում էր Կաթնաղբյուր սրբացված աղբյուրը: Տեղի թուրքերը երկրորդ եկեղեցին վերածել էին ջամիի (մահմեդական աղոթատեղի):
36	Յալընըգբաղ			Գյուղի մոտ՝ Չարդախու լեռան ստորոտին էր գտնվում Միավոր Սբ Կարապետ նշանավոր մենաստանը: Յալընըգբաղին արևելքից հարևան Ջալարուզուր (Ճրկապուր, Ջլաբզուն) գյուղում գտնվել է միջնադարյան Ճլեմնի Սբ Աստվածածին վանքը: Նշված բնակավայրերն ընկած էին Երզնկա քաղաքից հս, ուր կային բազմաթիվ բռնի մահմեդականացված գյուղեր, որոնք պահել էին հայեցի անվանումները՝ Խորանթաղ, Մելիքթաղ, Վաղավեր, Վարդանշահ (Վարդանիս), Վասկերտ (<Վասակակերտ, մի ձեռագիր հիշատակարանից հայտնի է գյուղի եկեղեցու անունը՝ Սբ Լուսավորիչ), Փարաբաղ (< Պարաբակ): Երզնկայի գավառի հյուսիսային սահմանը կազմող Սուրբ Գրիգոր լեռնաշղթայի (XX դ. սկ.՝ Սբրնգոր կամ Սիփիքյոր) շրջանում պահպանվել էին « Քառասուն խաչեր » ուխտավայր-հնավայրը (ավերակ եկեղեցիով և հայկական տապանաքարերով), ինչպես նաև Սբ Եղիայի վանքի մնացորդները:
37	Շըխնի (Շըխի)	Սբ Խաչ	1	
38	Շոխա (Իշող)			Գյուղը նշանավոր էր Շողային կամ Շողակաթ Սբ Աստվածածին մենաստանով (Շոխայիվանք):
39	Ուռեկ (Ուռիկ)	Սբ Թորոս		Գյուղում կար ևս 1՝ կիսավեր եկեղեցի (Սբ Թորոս): Ձեռագիր հիշատակարաններում հիշվում է Սբ Ստեփանոս եկեղեցին:
40	Չորգանց (Չոլխաս)			
41	Ջրանոս (Երանոս)			
42	Սրբխու Սուրբ Թորոս			Դերջանի նշանավոր համանուն վանքին կից գյուղակը: Վանքը գտնվել է Սրբերդ (Միլփեթ) փոքրիկ լեռնաշղթայի հարավային լանջերից սկիզբ առնող Սեղեմնուտ գետակի (Արմ Եփրատի աջակողմյան վտակներից) ձորահովտում և հայտնի էր նաև Գորոփու կամ Սբ Թեոդորոս Սալահունիի անունով: Խոշոր ուխտատեղի էր: Ենթադրվում է, որ նույնական է ձեռագրերում հիշատակվող Պղնձայգվո (Պղնձագույն) Սբ Աստվածածին անապատի հետ: Ի դեպ, վանքում պահվում էր պղնձե մի ձող (թրք. sirik), որտեղից էլ՝ վանքի անվանումը:
43	Սուրբ Նիկողոս (Սուրբ Նիկողայոս)			Բթառիձի մոտակա համանուն հոշակավոր մենաստանին կից գյուղակը: Նշանավոր ուխտատեղի էր: Վանքում պահվել են ձեռագիր մատյաններ:
44	Սուրբ Օհան (Սրբիհան)	Սբ Հովհաննես (Սուրբ Օհան)	1	Գյուղից հարավ՝ Արմ Եփրատի ափին, պահպանվել էին Արշակի կամուրջի ավերակները:
45	Վասկաթիլ (Վասակաթիլ)			

46	Վարի Չիֆթլիկ	Սբ Աստվածածին (Մայր Աստվածածին)	1	
47	Վերի Չիֆթլիկ	Սբ Աստվածածին	1	Գյուղում գործում էր գրադարան-ընթերցարան:
48	Տաճրակ (Տաճարակ)	Սբ Աստվածածին	1	Մոտակայքում կար 2 վանք՝ Սբ Գրիգոր և Գառնիկ ձգնավոր : Վերջինս կարևոր ուխտավայր էր նաև թուրքերի համար, որոնք այն կոչում էին Sultan-Seyidi: Հարևան Քի (Գի) գյուղի մոտ (բնակիչների նախնիները բռնի մահմեդականացած հայեր էին) կանգուն էր Տիրաշեն (սկզբնապես՝ Տիրանաշեն) կամ Սբ Ներսես Հայրապետ հինավուրց վանքը, ուր գտնվում էր Ներսես Մեծի դամբարանը՝ կաթողիկոսի շիրմաքարով (հայտնի ուխտատեղի էր): Վանքում պահվել են ձեռագիր մատյաններ: 1880-ական թթ. Երզնկայի թեմի առաջնորդ Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանի ջանքերով բացվել է գիշերօթիկ դպրոց, որը գործել է մինչև 1890-ական թթ. կեսերը: Տաճրակից հս ընկած Բրաստիք (Պռաստինք) գյուղի մոտ պահպանվել էր Սբ Քրիստավոր կիսավեր վանքը:
50	Տնկետեկ (Տակետեկ)			Մթննիի «թաղն» էր:
50	Քոլչեբենի բալանկա (Գոլչեբենի բալանկա, Քոլչեբենի փալանդա)	Սբ Հռիփսիմե	1	Մոտակայքում պահպանվել էին Սբ Գայանե վանքի ավերակները: Գյուղը գտնվում էր Երզնկայի արևմուտքով հոսող Չարդախլուղերե կամ պատմական Գայլգետ (Արմ Եփրատի աջակողմյան վտակը) ձախ ափին: Այս շրջանը կարևոր դեր ուներ հին Հայաստանի մշակութային և քաղաքական կյանքում: Քոլչեբենի բալանկայից արմ Չարդախլուղ-Գայլգետի աջ ափին, գտնվում էր Թիլ ավանը, ուր հեթանոսական Նանե դիցուհու նշանավոր տաճարն էր: Քրիստոնեության ընդունումից հետո Թիլը դարձավ Գրիգոր Լուսավորչի և նրա տոհմի կալվածքը: Թիլում պահպանվել էին ժողովրդի կողմից Ջուխտակ Հայրապետաց կոչվող վանքի ավերակները, ուր թաղվել են Լուսավորչի որդիներ Արիտակես և Վրթանես կաթողիկոսները: Նույնիսկ ավերակ վիճակում վանքն ուխտատեղի էր մինչև Մեծ եղեռնը: Թիլի անմիջական հարևանությամբ գտնվում էր Խոզնցիք (թրք. հորջորջմամբ՝ Hozunsu) երբեմնի հայաբնակ գյուղը, որի եկեղեցին, ըստ միջնադարյան հիշատակարանների, կոչվել է Սբ Աստվածածին : Մի փոքր արևմուտք (շուրջ 3.5-4 կմ) գտնվող Խախ ավանն Արշակունիների կալվածքն էր: Վերջինիս հարևանությամբ գտնվում էին Սլպուս (Սլքիս < Սուրբ Լույս) և Չորմես կամ Չերմե (< Զերմի) երբեմնի հայկական բնակավայրերը: Չորմեսի հյուսիսում՝ Չարդախլուղ-Գայլգետի վերին հովտում գտնվող Սրբկաթաղ բնակավայրում, պահպանվել էին Սբ Կաթողիկե վանքի 2 եկեղեցիների ավերակները: Գայլգետի հովտի այլ հայեցի անվանումներով գյուղերից էին Ագրակը (Քուրդ Ագրակ, թրք. Ekrek աղձատումով), Լորտուտուն, Աղրկին (<եղեգի), Պահիկը (Բահիկ < Պահք), Սելյուկեն (<Սաղրկա) ևլն:

52	Քուրդգեղ (Քրդգեղ, Նորգեղիկ)		Գյուղից հվ՝ Բրթնո լեռան ստորոտին գտնվում էր Սբ Կիրակոս (Սբ Յուդիտա) վանքը:
----	-----------------------------------	--	--

Ծնթ. Ազրակ, Գոմկա, Դվնիկ, Հերանի (Վերին), Մանթարա և Սրբխու Սուրբ Թորոս բնակավայրերը հայ եկեղեցու թեմական բաժանմամբ **Դերջանի** կազմում էին: Այս հատվածում ևս առկա էին բազմաթիվ հայաճանաչ գյուղեր, որոնց բնակիչները կան բռնի կրոնափոխվել էին և կան հեռացել՝ չտանելով մահմեդականների բարբարոսությունները [**Զորին, Կաղնիք, Կաղնուտ, Կարմրի** (թրք. **Germili** աղավաղումով, մոտակայքում՝ **Կարմրկա** կամ **Կարմրորակ վանքի** ավերակները), **Կոլեր, Հարսի(ն), Սևքար (Շյովքար), Վերինգյախ** (<**Վերինգեաղ**) ևն:

7) Կամախի գավառ

Կամախի գավառն ընկած էր **Երզնկայից** արևմուտք և ընդգրկում էր **Արմ Եփրատի** վերին ավազանը գրավող **Կամախի սարահարթի** հիմնական հատվածը: Սահմանակից էր արևելքից և հյուսիսից՝ **Երզնկայի** (կենտրոնական) գավառին, հարավից, **Մնձուրի** կամ **Սուգուրի** լեռնաշղթայով՝ **Դերսիմին**, իսկ **Եփրատի** հունով՝ **Ակնի գավառին** (2-ն էլ՝ **Խարբերդի նահանգում**), արևմուտքից՝ **Ղուռուչային** և **Կերձանիսին (Ռեփահիե)**: Գավառի կենտրոնն էր **Կամախ** կամ պատմական **Անի** բերդաքաղաքը (նաև՝ **Անի-Կամախ**, թրք. **Kemah** աղձատումով), որը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Վերջինս հեթանոսական դարաշրջանում ուներ և՛ կրոնական, և՛ քաղաքական մեծ կարևորություն, քանի որ այստեղ են գտնվել Հայոց դիցարանի գերագույն աստված **Արամազդի** տաճարը, ինչպես նաև արքայական դամբարանները: 20-րդ դարի սկզբին երբեմնի նշանավոր այս բնակավայրը վերածվել էր սակավամարդ գյուղաքաղաքի (տարբեր տվյալներով՝ 600-800 տուն): Այն հիմնականում տարածվում էր **Արմ Եփրատի** հարավային՝ ձախ ափին, **Թանաջուր** վտակի գետաբերանի մոտ: Այս հատվածում պահպանվել էր հնագույն բերդը, ուր և գտնվել է **Արամազդի** մեհյանը: Գետի աջափնյակում, **Եփրատի** մյուս՝ **Բագառիձ** վտակի ստորին ձորահովտում, ընկած էին գյուղաքաղաքի «թաղ»-արվարձանները (**Հայկական** և **Թուրքական Սաղ, Զգրաշեն, Քարտակ** ևլն): 1914 թ. **Կամախի** հայերի թիվը հասնում էր 500-ի, որոնք ցրված էին ինչպես **բուն Կամախում**, այնպես էլ «թաղերում»: Հարևան **Երզնկայի** պես **Կամախի** հայությունը 17-րդ դ. սկզբին ենթարկվեց սարսափելի արհավիրքների **Արևմտյան Հայաստանը** պատուհասած ջալալիների խժոժություններից: Արդյունքում սկիզբ առավ մի ահավոր արտագաղթ դեպի **Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Թրակիա**, որտեղից՝ **Ղրիմ** և **Լեհաստան**: Տեղում մնացած բնակչության մի զգալի հատված մահվան սպառնալիքի տակ հարկադրված մահմեդականություն ընդունեց՝ ժամանակի ընթացքում կորցնելով ազգային ինքնությունը: 20-րդ դարի սկզբին **Կամախի գավառի** հայությունը կենտրոնացած էր բավական սահմանափակ թվով բնակավայրերում, թեև դրանց մեջ հանդիպում էին խոշոր ավաններ և գյուղեր (տես ստորև): 1915 թ. գավառի ավելի քան 8000 հայերը երզնկացի և էրզրումցի իրենց ազգակից-

ների հետ գլխավորն բնաջնջվեցին **Կամախի** ահասարսուռ կիրճում: Չնայած ստեղծված դժնդակ պայմաններին՝ ինքնապաշտպանական մարտեր են եղել **Բագառիճների** շրջանում, ինչպես նաև **Արմ Եփրատի** ափին գտնվող **Լիճք** ավանի (վարչականորեն՝ **Խարբերդի նահանգում**) մոտակա լեռներում:

ՀԱՎԵՎԱԾ

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ավագ վանք (Սբ Թադևոս)			Կամախի և Երզնկայի սահմանագլխին բարձրացող հոչակավոր և հայ մատենագիրների կողմից «աստուածաբնակ» մեծարվող Սեպուհ կամ Մանյա այրքը (Մանի) լեռան հվ-արևելյան լանջին կառուցված ոչ պակաս նշանավոր Ավագ կամ Սբ Թադևոսի վանքի գյուղակ-ագարակը (նաև՝ Կառնովանք): Վանքն առանձնապես հոչակված էր « Դեղթափ » սրբությանը, որին վերագրվում էին բժշկական հզոր հատկություններ: Ավագ վանքը եղել է կրթամշակութային կարևոր կենտրոն՝ ձեռագրական հարուստ հավաքածուով:
1	Ավագ վանք			Չեռագիր մատյանների շարքում առանձնանում էր Կիլիկիայի Օշին արքայի օրոք (1308-1320) ընդօրինակված մագաղաթյա Աստվածաշունչը : Սեպուհի լեռնագանգվածը, որը Հայոց պաշտամունքային գլխավոր կենտրոններից մեկն էր դեռ անհիշելի ժամանակներից ի վեր, այդ դերը պահպանեց նաև քրիստոնեության ընդունումից հետո: Լեռան գլխավոր 4 գագաթների (Գոհանամ, Սեպուհ, Տիրնակ, Փոսատ) խորշերում դեռ հեթանոսության դարաշրջանից հայտնի տաճար-մեհյանների հիման վրա կառուցվել են մի շարք վանքեր: 1.Սբ Գրիգոր Լուսավորիչ (Մեծ Լուսավորիչ, Սեպուհի վանք) , որին կից էր ուխտատեղի դարձած նշանավոր Մանյա այրքը՝ Հոփսիսիան կույսերից Սբ Մանեի (Մանի) քարայր-ձգնարանը (պահպանվել էր նաև սրբուհու շիրմաքարը): Նույն քարայրում Սբ Մանեի մահվանից հետո իր կյանքի վերջին տարիներն է անցկացրել Լուսավորիչը : Հայտնի էր մոտակա մշտադալար ցրդիի և սոճու սրբազան պուրակը: 2.Կայիփոսի Սբ Հակոբ (Կապոսի վանք, Դերեվանք) ՝ 13-15-րդ դդ. մշակութային խոշոր կենտրոն, միջնադարյան համալսարան: 3. Սրբոց երեց Մանկանց անապատ (Սբ Գրիգորի մոտ) : 4.Սբ Մինաս :
2	Արեգակ Սուրբ Նշան (Միջին Բագառիճ)		1	Դպրոցը՝ Արայան : Համանուն նշանավոր վանքի ագարակը: Որոշ ուսումնասիրողների կարծիքով այստեղ է գտնվել Հին Հայաստանի 8 գլխավոր մեհյաններից արևի աստված Միհրի տաճարը:

Է (ԺԳ) փաթիլ, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015

ՎԿՄ համահայկական հանդես

3	Բագառիձ (Ներքին, Մեծ)	Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Հակոբ, Սբ Նշան	2	Դպրոցներից մեկը՝ Արմենակյան : Գյուղի շրջակայքում հանդիպում էին Սբ Աստվածամայր, Սբ Գևորգ, Սրբբեր, Սբ Սարգիս վանքերի ավերակները: Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2200 հայ բնակչով: Ն.Բագառիձում է ծնվել Սողոմոն Թեղերյանը (1896–1960)՝ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Թալեթին ահաբեկողը (15.03. 1921, Բեռլին):
4	Բագառիձ (Վերին, Փոքր)	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս	1	Դպրոցը՝ Հայկյան : Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. 1200–1300 բնակչով:
5	Գառնի (Կառնի)	Սբ Թորոս, Սբ Սարգիս	1	Դպրոցը՝ Թորոզյան : Շրջակայքում հանդիպում էին 7 վանքի կամ եկեղեցու ավերակներ:
6	Գոմեր	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր), Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Արամյան : Միտակայքում՝ Սբ Հրեշտակապետ մենաստանի մնացորդները: Մեծ համբավ ուներ նաև Ջորենանգիստ սրբավայրը (նախկին վանք):
7	Գոմրկներ			
8	Ջաքարի	Սբ Աստվածածին, Սբ Հակոբ	1	Շրջակայքում երևում էին 4 վանքի ավերակներ, որոնցից մեկը հայտնի էր Սբ Սարգիս անունով:
9	Թավկըներ	Սբ Աստվածածին (Սբ Մինաս)	1	Դպրոցը՝ Խոսրովյան : Շրջակայքը հարուստ էր շեն և ավեր վանքերով: Դրանցից նշանավոր էր Սրբոց Սերովբեից–Քերովբեից վանքը, որը գտնվում էր գյուղից հյուսիս՝ Մեպուհ լեռան արևմտյան ստորոտին: Մյուս ավերված և ամայացած վանքերն էին Սբ Աստվածածինը, Սբ Գևորգը և Սբ Թորոսը :
10	Թորդան (Թորթան)	Սբ Հարություն	1	Դպրոցը՝ Պարթևյան : Թորդանում է գտնվել Հին Հայաստանի 8 գլխավոր մեռյալներից Բարշամին «ապիտակափառ դիցին» նվիրված տաճարը, որի տեղում Սբ Գրիգոր Լուսավորչի կողմից կառուցվեց Սբ Խաչ (Սբ Նշան) վանքը, որն ավելի ուշ ժողովրդի շրջանում ավելի հայտնի էր « Ինն Սրբոց գերեզման » անունով, քանի որ, ըստ ավանդության, այստեղ թաղվել են 9 երևելի սրբադասված անձինք, ինչպես Սբ Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Գ Մեծ արքան կնոջ՝ Աշխենի հետ, Հուսիկ Կաթողիկոսը և ուրիշներ: Թորդանի հարևան Երգեղան և Մուշագրակ գյուղերը նախկինում հայաբնակ են եղել:
11	Իխթիք	Սբ Աստվածածին		
12	Կամախ գյուղաքաղաք	Սբ Սարգիս	1	Դպրոցը՝ Տրդատյան : Գյուղաքաղաքից հվ՝ Թանաջուր վտակի հովտում, գտնվում էին Թան և Չիներիչ ժամանակակից երբեմնի հայաբնակ գյուղերը: Այստեղ է գտնվել նաև Ծանառձո Սբ Աստվածածին միջնադարյան վանքը:

13	Կամարիկ			
14	Հազարք	Սբ Աստվածածին, Սբ Եղիա	1	Դպրոցը՝ Լուսավորչյան :
15	Հողուս (Հովուս)	Սբ Տիրամայր (քաղկեդոնական)	1	Դպրոցը՝ Արշակունյան : Բնակիչները հայ-հռոմներ էին, որոնք պահել էին մայրենին: Գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. 1500-1800 բնակչով: Հողուսից արլ՝ Եփրատի ձախակողմյան Հառիձ (թրք.՝ Eric աղձատունով) վտակի հովտի երբեմնի հայաբնակ գյուղերից էին Հառիձը , Ոսկերերդը (թրք.՝ Üskübürt աղձատունով), Վանքուկը ևլն:
16	Սարեք	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս	1	Դպրոցը՝ Վարդանյան : Գյուղի մոտ գտնվում էին Սրբոց Անարծաթ բժշկապետաց (Կոզմոսի և Դամիանոսի) և Խնդրակատար (Խանեկտուր) Սբ Աստվածածին կիսավեր վանքերը:
17	Ուռի	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Վահանյան : Պահպանվել էին Սբ Գևորգ և Սբ Տիկին կիսավեր վանքերը: Ուռիից արևմուտք՝ Եփրատի աջ ափին գտնվող Վապի գյուղի հայերը, 17-րդ դարի սկզբին, փրկվելով ջալալիների վայրագություններից, գաղթել են Կ. Պոլիս և Թեփրդաղ (Ռոդոստո) ՝ իրենց հետ տանելով գյուղի Սբ Թագավոր եկեղեցում պահվող Սբ Խաչափայտի այն մասունքը, որի վրա փակցված էր Պիղատոսի հրամանով մակագրված « Թագավոր Հրեից » ցուցանակը:
18	Սաղ(ի)	Սբ Աստվածածին		Մոտակայքում է գտնվել Սաղի Սբ Ստեփաննոս վանքը:
19	Քարտակ	Սբ Հովհաննես		

8) Ղուռուչայի և Կերձանիսի (Ռեփահիե) գավառներ

Երզնկայի սանջակի այս երկու գավառներն **Էրզրումի նահանգի** ամենաարևմտյան վարչամիավորներն էին՝ պատմական **Փոքր Հայքի** սահմանագլխին: Դրանցից 1-ինը (հայկական աղբյուրներում՝ **Աղյուն** կամ **Աղնցիք**) գրավում էր **Արևմտյան Եփրատի** աջակողմյան **Ղուռուչայ** (թրք. «չոր գետ») և **Արմտան** վտակների հովիտները, իսկ 2-րդը՝ **Գայլգետի** (բրբռ.՝ **Քելքիտ**, որն էլ փոխառնված է թուրքերի կողմից) վերին ճյուղերից մեկի ավազանը: Երկու գավառներն էլ արևմուտքից ընդհանուր սահման ունեին **Սվազի (Մերաստիա)** նահանգի, իսկ արևելքից՝ **Կամախի** հետ: Հյուսիսից **Կերձանիսի գավառը** սահմանակցում էր **Տրապիզոնի նահանգին (Ղուռուչայը Կերձանիսի** հարավային սահմանն էր կազմում): Վերջապես, **Ղուռուչայի գավառը** հարավից՝ **Եփրատի** հունով, փոքր սահման ուներ **Խարբերդի նահանգի** հետ: Թե՛ **Ղուռուչայ-Աղնցիքի**, թե՛ **Կերձանիսի (Ռեփահիե)** հայ բնակչության մեծագույն մասը XVII դ. ձուլվել կամ հեռացել է տարբեր վայրեր: Արդյունքում, այս երկու վարչամիավորների տարածքի հիմնական մասում հայ բնակչությունը խիստ նոսրացել էր՝

կենտրոնանալով սահմանափակ թվով բնակավայրերում, թեև դրանց շարքում ևս հանդիպում էին բազմամարդ գյուղեր (տե՛ս ստորև): 1914 թ. **Ղուռուչայի** և **Կերձանիս-Ռեփահիեի** հայ բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 8200 մարդ, այսինքն՝ այնքան, որքան **Կամախի գավառում**: 1915 թ. տեղի հայությունն արժանացավ հարևան գավառների հայրենակիցների ձակատագրին՝ դառնալով ցեղասպանության զոհ:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
ա/ Ղուռուչայ				
1	Ապուշտա (Հապշտա)	Սբ Թորոս		Գյուղում կար 3 մատուռ-ուխտատեղի՝ Սբ Աստվածածին (բրբռ.՝ Սբ Աստվածամար), Սբ Սարգիս կամ Սերգիս (« Էնկիշտեն շեհիրի »՝ բնակատեղիի անունով), Սբ Փրկիչ (ավերակ):
2	Արմտան Սեճ	Սբ Աստվածածին (Վերափոխման Աստվածածնի)	2	Դպրոցները՝ Արամյան, Մամիկոնյան : Արմտանների շրջակայքում գոյություն ունեին մի քանի ավերակ եկեղեցիներ՝ Սբ Թորոս, Սբ Կարապետ, Սբ Նիկողոս : Հայտնի էին հետևյալ մատուռ-ուխտատեղիները՝ Սբ Գևորգ (սախսկին վանք՝ հայտնի նաև Արմտու վանք անունով), Սբ Կարապետ, Սբ Պանտալեոն : Մ. Արմտանի կարևոր սրբավայրերից էր նաև « Այազմա » սուրբ աղբյուրը (հունարեն՝ «սուրբ ջուր») Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2500 հայ բնակչությամբ: Մի փոքր արլ՝ Արմ Եփրատի աջակողմյան Ղուռուչայ վտակի հովտի աջափնյակում, ընկած էին Ագրակ, Կամխո (« Հաղամախո , մոտակա Սբ Շնորհավո ավերակ վանքով), Կեսկա երբեմնի հայաբնակ գյուղերը: Նույն գետակի ձախ ափին գտնվող Սիմա գյուղի մոտ գտնվել է Եղիվանք կամ Սբ Կարապետ մենաստանը:
3	Արմտան Փոքր	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ Մեսրոպյան : Կային մի քանի մատուռ-ուխտատեղիներ՝ Սբ Գրիգոր, Սբ Եղիա՝ Կարմեղոսածագ բլրի վրա, Սբ Թորոս, Սբ Կարապետ, Սբ Սարգիս (Սերգիս), Վարդավառ Սբ Աստվածածին : Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 1400 հայ բնակչությամբ:
4	Թուղուտ (Թեղուտ)	Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Մուրբզևորգյան : Գործել է Սբ Սարգիս մատուռը: Գյուղում կար 2 ավերակ եկեղեցի՝ Սբ Քորթ (Գևորգ) և Սբ Օհան : Թուղուտի շրջակայքում կար մի քանի ուխտատեղի՝ Սբ Թորոս, «Ջերմի ուխտ» Սբ Սարգիս կամ Սերգիս, Սբ Վարվառ, Սբ Փրկիչ :
5	Հասանովա	Սբ Աստվածածին (Սբ Նիկողայոս)	1	Դպրոց՝ Մալախունյան :

6	Տանձի	Սբ Նշան (Սբ Հակոբ, ավերակ)		
բ/ Կերճանիս				
7	Կերճանիս (Ռեփահիեն)			Եկեղեցին՝ կիսակառույց և չգործող:
8	Հոռոփուլ	Սբ Աստվածածին (Սբ Աստվածամայր)	1	Դպրոցը՝ Մանուրյան : Գյուղի մոտ գտնվում էր Ջնձորի (Ցնձորի) ավերակ վանքը:
9	Մելիք-Շերիֆ	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	Դպրոցը՝ Սեպուհյան : Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1400 հայ բնակչությամբ:

9) Ղուզուջանի (Խուզիջան) գավառ

Էրզրումի նահանգի տարածքով ամենավոքոր վարչամիավորն էր: Ընդգրկում էր **Մերջան-Մնձուրի** և վերջինիս արևելյան շարունակությունը կազմող **Գայլախազուտ-Պախար (թրք.՝ Bağıraba)** լեռների դժվարամատչելի հարավային ձորահովիտները՝ **Մնձուր** գետի ձախ բազուկը հանդիսացող **Բոլոմորի (<Բոլորմորի, թրք.՝ Pülümürsuyu աղձատումով)** վերին ավազանում: Կենտրոնը **Բոլոմոր (Բոլորմորի)** ավանն էր: Գավառը համարվում էր ըմբոստ **Դերսիմի** մաս, ուստի թուրքական իշխանությունն այստեղ հիմնականում ձևական բնույթ ուներ: Անմատչելիությունն էր հիմնական պատճառը, որ **Բոլոմորի** մասին հայկական աղբյուրներում ևս հանդիպում են խիստ կցկտուր, հաճախ՝ հակասական և իրարամերժ տեղեկություններ: Ստույգ հայտնի չէ նույնիսկ հայաբնակ գյուղերի և հայ բնակչության թիվը: Ստորև ներկայացվող ցուցակը կազմված է ո՛չ միայն 20-րդ դարի սկզբի, այլև 19-րդ դարի վերջի սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա և որոշակի ձգբրտման կարիք ունի: 1915 թ. **Ղուզուջանի** հայ բնակչությունը ևս ենթարկվեց կոտորածի, սակայն լեռնային դժվարամատույց դիրքը հնարավորություն ընձեռեց շատ հայերի փրկվել: Ավելին, **Ղուզուջանը, Դերսիմի** այլ շրջանների նման, ապաստան է դարձել հարակից որոշ տարածքներից մազապուրծ բազմաթիվ հայերի համար: Դրանում որոշակի էր նաև տեղի **դմիկ (զազա)** ցեղերի քիչ թե շատ հայանպաստ դիրքորոշումը: Հետագայում, մասնավորապես 1917 թ. վերապրած հայերի զգալի մասը կարողացավ անցնել ռուսական բանակի կողմից գրավված **Երզնկա** և փրկվել:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ագրակ			
2	Աղային-շենիկ			
3	Բերկրի (Փերգինի)	Սբ Մինաս		
4	Բոլոմոր (Բոլորմորի)			
5	Գոլ (Կոլ)			
6	Կեռսնուտ (Կերսնունդ)	Սբ Սարգիս		

7	Կգրվմեջիթ			
8	Կոգլուջա			
9	Ռաբաթ			
10	Տանձիկ	Սբ Աստվածածին		Գյուղի մոտակայքում գտնվում էին Սբ Թադևոս և Սբ Քառասունք (Սբ Սիմեոն) վանքերը:

Ծնթ. Ղուգուջանի հայկական սրբավայրերի և դպրոցների վերաբերյալ տեղեկատվությունը խիստ թերի է: Հայտնի է (ձեռագիր հիշատակարանից), որ գավառի երբեմնի հայաբնակ **Բաբերցիք** < **Բաբերդցիք** (թրք.՝ Bayburtlu պարզ թարգմանությամբ) գյուղի եկեղեցին կոչվել է **Սբ Աստվածածին**: Գավառի կենտրոնը Բոլոմոբ ավանն էր:

Summary

HISTORICAL AND DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

Part three: central and western provinces of Erzurum vilayet and the cities of Erzurum (Karin) and Erzinka

Gegham M. Badalyan

Keywords – Vilayet of Erzurum, Erzurum (city), Erzinka (city), Erzurum province, Derdzhan province, Bayburt (Baberd) province, Kamakh province, İspir province, Kiskim (Berdagrak) province, Khotorjur (Sirakonak).

The article presents the list of the Armenian-populated areas by individual districts (Kaza in Turkish) in Western Armenia on the eve of the Armenian Genocide and villages (in the tour. Nahiye) in the vilayet of Erzurum. Lists are made up of the same principles that have been applied in the case of Van province: the list includes villages, churches, monasteries, schools and different information about the collections of manuscripts and books. In addition, it presents statistical data on the Armenian population in the most densely populated areas (city, district, town, village, large village).

The first part covers the central and northern regions of the province of Erzurum, plus the central and northern parts of Erzurum city, and the Sandzhak Erzinka, the reader can find brief information about each of them. Also 2 main cities of vilayet Erzurum and Erzinka are presented. The map of Erzurum vilayet is attached to the article.

Резюме

ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН

Гегам М. Бадалян

Ключевые слова – Вилает Эрзурум, город Эрзурум, Город Ерзнка, провинция Эрзурум, провинция Держан, провинция Байбург (Баберд), провинция Камах, провинция Испир, провинция Киским (Бердаграк), Хоторджур.

В статье представлены списки армянонаселенных пунктов Эрзурумского вилайета Западной Армении накануне геноцида армян. Списки составлены по тем же принципам, которые были применены в случае вилайета Ван: в список входят поселения, церкви, монастыри, школы а также информация о коллекциях рукописей и рукописных книг. Кроме того, представлены статистические данные о численности населения в наиболее густонаселенных армянами районах (город, район, поселок, деревня, большая деревня).

Первая часть публикации охватывает западные центральные части Эрзурумского вилайета и санджак Ерзнка в целом, о каждом из них читатель может найти краткую информацию. Представлены также 2 главных города вилайета Эрзурум и Ерзнка (Эрзинджан). К статье прилагается карта Эрзерумского уезда.

ՀՀ-ի համահայկական հանրելս
Է (ԺԳ) քարթ, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015